# Ազգ
Azg

1 ՓԵՏՐՈՒԱՐ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 15(4634)

ISSN: 1829-1651


## Հարավային Սուդանը՝ «ինքնորոշման իրավունքի հաղթարշավի ամենաթարմ օրինակ»

Հայաստանը ողջունում է Հարավային Սուդանում անցկացված հանրաքվեն: Հանրաքվեի հրապարակված նախնական արդյունքները, որոնք վստահաբար էապես չեն տարբերվելու վերջնականից, եւս մեկ անգամ ամրագրեցին, որ ազատ ինքնորոշումը յուրաքանչյուր ժողովրդի անքակտելի իրավունքն է: Այսպես է մեկնաբանել Հարավային Սուդանում կայացած հանրաքվեի արդյունքները Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը**՝ ի պատասխան «Արմենպրես» գործակալության հարցին:

«Հարավային Սուդանի բնակչության այս ընտրությունը արդեն շուրջ 60 տարի ՄԱԿ-ի ստեղծումից ի վեր, տեղի ունեցող ինքնորոշման իրավունքի հաղթարշավի ամենաթարմ օրինակն է եւ առկա խնդիրները լուծելու ճիշտ ճանապարհ, որը միանշանակ ողջունվում է միջազգային հանրության կողմից», նշել է Նալբանդյանը:

Նախարարը հույս է հայտնել, որ իր կամարտահայտությամբ ընտրելով սեփական ճակատագիրը տնօրինելու ուղին՝ Հարավային Սուդանը հաջողության կհասնի անկախ պետականության հաստատման եւ կայացման գործում:

Հունվարի 9-15-ը Հարավային Սուդանում տեղի ունեցած հանրաքվեի նախնական արդյունքներով, քվեարկությանը մասնակցած ընտրողների ավելի քան 99 տոկոսը կողմ է քվեարկել Հարավային Սուդանի առանձնացմանը հյուսիսից՝ վերջ դնելով տասնամյակներ տեւած քաղաքացիական պատերազմին: Այս արդյունքները դեռեւս չեն ամբողջացնում քվեարկության՝ Հյուսիսային Սուդանում եւ 8 տարբեր երկրներում հարավսուդանյան սփյուռքի ձայների հաշվարկը, որը սակայն ընդհանուրի շատ փոքր մասն է կազմում:

Այս հանրաքվեն նախատեսված էր դեռեւս 2005-ին, երբ համաձայնությամբ վերջ դրվեց տասնամյակներ տեւող եւ Աֆրիկայի ամենաերկար, ավելի քան 2 մլն մարդու կյանք խլած քաղաքացիական պատերազմին երկրի հյուսիսի եւ հարավի միջեւ: Սուդանի նավթաբեր հարավային 10 նահանգներից հինգը այս հանրաքվեում քվեարկել են 99.9 տոկոս կողմ՝ ապրելու առանձին եւ ինքնուրույն:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Խմբ. կողմից.- **Կիրակի օրը Սուդանի մայրաքաղաք Խարթումում նույնպես սկսվեցին հակակառավարական խռովություններ, որոնք շարունակվելու պարագայում կարող են կասկածի տակ դնել հանրաքվեի արդյունքները:***

## ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ջինը շշից դուրս է եկել...

Ամենայն հավանականությամբ այսօրը ամենաճակատագրականը կլինի եգիպտական ժողովրդական ըմբոստության համար: Վերջինիս ակտիվիստները, որոնք դեռեւս առաջնորդի փնտրտուքի մեջ են, որոշել են այսօր Կահիրեի «Թահրիր» («Ազատագրում») հրապարակում մեկ միլիոնից ավել ցուցարար հավաքել: Նրանք վերջնագիր են տվել բանակին մինչեւ առավոտ դիրքորոշվելու ժողովրդի կողքին, այլապես սպառնում են քայլերթ կատարել դեպի նախագահի նստավայր՝ նրան վայր առնելու հաստատ նպատակադրմամբ:

Դեպքերը ինչպես կզարգանան թունիսյան հեղափոխության կայծից բոցավառված այս երկրում եւ, ընդհանրապես, ո՞ւր է գնում տարածաշրջանի ամենակարեւոր եւ Աֆրիկայի 2-րդ մեծագույն տնտեսությունն ունեցող Եգիպտոսը–սա այն հարցն է, որը տալիս են բոլորը: Նախագահ Մուբարաքի իշխանության հետագա ճակատագիրը քչերին է հետաքրքրում այլեւս, դա անցյալ է արդեն, որի գոյատեւումը միայն արյան բաղնիք է խոստանում՝ առանց տեւական կարգավորման որեւէ խոստման: Բոլորին հետաքրքրում է ապագան՝ ինչպիսի՞ իշխանություն, ինչպիսի՞ կորուստներից հետո, ի՞նչ արեւելումով՝ դեպի Արեւմո՞ւտք եւ Վաշինգտո՞ն, որի գլխավոր 2-րդ շահառուն է Եգիպտոսը՝ Իսրայելից հետո եւ Իսրայելի հետ 30 տարվա «խաղաղության» պայմանագիրը պահպանելու համար, թե՞ դեպի իսլամական ֆունդամենտալիզմ, որով վարակված է ողջ տարածաշրջանը, որի խթանիչը ոչ միայն Մուբարաքի վարչակարգի միահեծան էությունն է, աղքատությունը, անազատությունները եւ իշխանությունների կոռումպացվածությունը, այլեւ, խորքում, դառնացածությունը Իսրայելի նկատմամբ երկրի ղեկավարության մեղկ դիրքորոշումից:

Բոլոր պարագաներում, դեպի որ կողմ էլ գնա Եգիպտոսը, հարցերն այնտեղ շուտափույթ չեն կարգավորվելու: Ընդհակառակը, հեղաշրջման եւ ըմբոստության հրդեհը տարածվելու է հարեւան արաբական շատ երկրներ, միաժամանակ ծանրագույն կորուստներ պատճառելով համաշխարհային տնտեսությանը՝ հատկապես Սուեզի ջրանցքով անցկացվող բեռնափոխադրումների մասով: Խիստ ուշացած պետք է նկատել նաեւ անցումային կառավարում ստեղծելու (միշտ Մուբարաքի գլխավորությամբ) Լոնդոնի ու Վաշինգտոնի առաջարկած «դեղամիջոցը»: Դա պետք է արվեր առնվազն երկու տասնամյակ առաջ: Դա պետք է անել հիմա՛ մյուս արաբական երկրներում՝ թագավորական, փոքրամասնական, բռնապետական եւ համայնքային կամ այլ կառավարում ունեցող պետություններում, որտեղ տարիների փտածության եւ հակաժողովրդավարության աղբ կա կուտակված:

Ջինը դուրս է եկել շշից. հնարավոր չէ այն վերստին կոխել շշի մեջ: Պետք է մտածել հետագայի մասին, անարյուն եւ առանց խոշոր ավերածությունների կայուն ապագա ստեղծելու մասին, դրան շուտափույթ հասնելու մասին:

Երեկ թունիսյան եւ այսօր եգիպտական հեղափոխությունները դրական արագ քայլեր են թելադրում մյուս երկրներին: Եվ ոչ միայն արաբական երկրներին:

**Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ**

# Ո՞վ է կեղծ եւ ո՞վ իսկական ընդդիմությունը, եւ ո՞վ է ամենաիշխանությունը

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



Մինչ արաբական հեղափոխության քաոսը քիչ մնա խժռի իր զավակներին՝ սպառնալով քաոսի եւ անկառավարելիության վերածել ողջ արաբական աշխարհը, մերոնց ընդդիմադիր հատվածը զբաղված է ճշտելով, թե ո՞վ է իսկական ընդդիմությունը: Այս ճշտման նոր ռաունդը սկսեց «Ժառանգության» **Արմեն Մարտիրոսյանը**, որ «**Ազգի**» հրավերին՝ անվանել իր բնորոշած կեղծ ընդդիմությանը, ի վերջո խուսափեց դա անելուց, բայց եւ թվեց հատկանիշները, որոնցով կարելի է գլխի ընկնել, թե ո՞վ է կեղծ ընդդիմությունը՝ այն ուժը, որ նախագահական ընտրություններին սատարել է նախագահին, կողմ է եղել հայ-թուրքական արձանագրություններին, կառավարության գործելակերպին, իսկ հիմա այս բոլորին ճիշտ հակառակ պահվածք է որդեգրել: Սա անցած հինգշաբթի էր: Դրանից հետո պատը ստացավ եւ փոխանցեց ՀԱԿ համակարգող **Լեւոն Զուրաբյանը**, ըստ որի կեղծ եւ իրական ընդդիմությունը կարելի է տարբերակել այդ ուժերի կազմակերպած հանրահավաքներով. երբ Երեւան բերող ճանապարհները փակվում են, հանրահավաքի ակտիվիստներին ձերբակալում կամ ընդհանրապես՝ ոստիկաններին հանում են ընդդիմության դեմ, այ հենց դա էլ իսկական ընդդիմությունն է (եթե դա այսօ՛ր ասեր Զուրաբյանը՝ պիտի ավելացներ, թե իսկական ընդդիմությունն այն է, ում «Ազատության» հրապարակը մերժում են տրամադրել՝ հանրահավաք անցկացնելու համար, քաղաքապետարանը փետրվարի 18-ի հանրահավաքի անցկացման համար մերժել է «Ազատության» հրապարակի տրամադրումը ՀԱԿ-ին): Դրան հետեւեց **Տիգրան Կարապետյանի** արձագանքը (ենթադրվում է, որ այս երկու քարերն էլ Կարապետիչի բոստանն են նետված). «Ո՞վ է ընդդիմություն. նա , ումից իշխանությունը խլե՞լ է ունեցվածքը, թե՞ նա, ով ներկայանում է ընդդիմություն, սակայն նրան պատկանող օբյեկտներն էլ ու բիզնեսը շարունակում են գործել», թափանցիկ ակնարկել է Կարապետիչը: Կարծում ենք՝ միմյանց վրա տակառ գլորելու այս գործընթացը դեռ կշարունակվի:

*Տես էջ 3*

## Միջազգային հետախուզություն եւ կալանք Եղիազարյանի նկատմամբ

**Այս մասին երեկ որոշում է կայացրել Մոսկվայի քաղաքային դատարանը՝ բավարարելով ներկայացված հայցը: Հիշեցնենք, որ ՌԴ Պետդումայի՝ Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը ներկայացնող հայազգի պատգամավորին անցյալ տարվա հոկտեմբերին նույն Պետդուման զրկեց անձեռնմխելիությունից: ՌԴ դատախազությանն առընթեր Հաշվիչ պալատը Աշոտ Եղիազարյանի նկատմամբ հարուցել էր քրեական գործ «մեծ չափերի հասնող մեքենայությունների» մեղադրանքով: Արդեն նախկին պատգամավորը հերքում է իրեն հասցեագրված բոլոր մեղադրանքները: Ավելի վաղ նա հայտնել էր, որ գտնվում է ՌԴ տարածքից դուրս, քանի որ «վախենում է իր եւ իր ընտանիքի անվտանգության համար»:**

**Հ. Ա.**

## Ձեռնպահ մնալ Թունիս եւ Եգիպտոս մեկնելուց

**Այս մասին հաղորդագրություն է տարածել Հայաստանի արտգործնախարարությունը՝ հաշվի առնելով այդ երկրներում տեղի ունեցող իրադարձությունները: Միեւնույն ժամանակ, ինչպես կարելի է ենթադրել մայրաքաղաքի տուրիստական գործակալությունների տվյալներից, կոնկրետ Եգիպտոսի իրադարձությունները չեն նվազեցրել այդ երկրի նկատմամբ հայաստանցիների ունեցած հետաքրքրությունը: Այս պահին էլ եգիպտական Շարմ էլ Շեյխում իրենց հանգիստն են վայելում հարյուրից ավելի հայաստանցիներ, որոնց կյանքին, համաձայն Եգիպտոսում ՀՀ դեսպանատան տվյալների, որեւէ վտանգ չի սպառնում:**

**Հ. Ա.**

## Ադրբեջանում հնարավոր ահաբեկչության զգուշացում ԱՄՆ-ից

ԱՄՆ պետքարտուղարությունը պաշտոնապես զգուշացրել է Միացյալ Նահանգների քաղաքացիներին «Ադրբեջանում ահաբեկչական գործողությունների հավանական սպառնալիքի առնչությամբ»: ԱՄՆ աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն, հնարավոր են հարձակումներ Ադրբեջանում տեղակայված ամերիկյան օբյեկտների վրա, ուստի ԱՄՆ քաղաքացիներին խորհուրդ է տրվում զգուշավոր լինել հանրային վայրերում, որտեղ նաեւ այլ օտարերկրացիներ են լինում, հատկապես արեւմտյան երկրներից:

Այս առնչությամբ Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարությունը մեկնաբանություն է տարածել, թե ադրբեջանական համապատասխան ծառայությունները «վերահսկում են իրավիճակը երկրում»:

**Ա. Հ.**

# «Թուրք դիվանագետներին ԱՍԱԼԱ-ի քողի տակ հանցագործ խմբի միջոցով «խորքային պետությունն» է սպանել»

### *Հայտարարել է «Էրգենեկոնի» գործով մեղադրվող Թունջայ Գյունեյը՝ տալով նոր հարցազրույց «Թաքվիմ» թերթին*

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**

«**Ազգի**» հունվարի 25-ի համարում անդրադարձել էինք Թուրքիայում «խորքային պետության» ռազմականացված թեւի՝ «Էրգենեկոն» ահաբեկչական կազմակերպության սեւ արկղի համարում ունեցող **Թունջայ Գյունեյի** հայտարարությանը. «Մենք չպետք է ԱՍԱԼԱ-ի մեջ որոնենք արտերկրում թուրք դիվանագետների սպանությունն իրականացնողներին»:

Նա այդ հայտարարությունն արել էր «Թաքվիմ» թերթին տված հարցազրույցում, որը հունվարի 21-ին արտատպել էր «Զամանը»: Հրապարակման համար օգտագործել էինք «Զամանի» արտատպությունը: Իմամի կրթություն ստացած, սակայն Թուրքիայից Կանադա տեղափոխվելուց հետո հրեական համայնքի ռաբբի կարգված Գյունեյը «Թաքվիմին» նոր հարցազրույց է տվել, որը տպագրվել է այս թերթի հունվարի 26-ի համարում: Թեման նույնն է, հարցազրույցում նույնպես շոշափվում է ԱՍԱԼԱ-ի անունը:

Անկախ ճշմարտության աստիճանից, հարցազրույցում Գյունեյի ասածները ուշագրավ են, իսկ դրա հրապարակման փաստը՝ ցնցող: Թե ինչո՞ւ են լռում թուրքական իշխանությունները կամ ինչպե՞ս են հանդուրժում այսպիսի հարցազրույցի հրապարակումը երկրում, երբ դրանում թուրք դիվանագետների սպանության համար բացահայտ մեղադրում են թուրքական պետական կառույցների հետ սերտաճած խմբավորումներին, որոնք հենց ԱՍԱԼԱ-ի դեմ պայքարի առաջադրանքով էին ստեղծվել, չգիտենք:

Սակայն ակնհայտ է, որ ԱՍԱԼԱ-ի գործունեությունը վերստին միջազգային օրակարգ մտցրեց Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Մտածել, որ թուրքական կառույցները ԱՍԱԼԱ-ի ձեռքով են ոչնչացրել թուրք դիվանագետներին, իրատեսական չէ, որովհետեւ դա ենթադրում է հայկական այս կազմակերպության գործունեության ակտիվացումը, իսկ ակտիվացման պայմաններում նախադրյալներ են ստեղծվում ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Հետեւաբար կարեւորը ոչ թե ԱՍԱԼԱ-ի մասին Գյունեյի «բացահայտումներն» են, այլ՝ դրանց միտումը: Սակայն դա բոլորովին այլ խնդիր է, առանձին մոտեցում է պահանջում: Ավելին, կարծում ենք, Գյունեյը երկու հարցազրույցով չի սահմանափակվի, որովհետեւ վաս օրինակը վարակիչ է, եւ օրինակի պարագայում՝ խոսքը նախ վերաբերում է WikiLeaks-ին, ապա նաեւ՝ «Ալ Ջազիրային»: Այդ իսկ պատճառով, առանց մեկնաբանության, ներկայացնում ենք Գյունեյի երկրորդ հարցազրույցը այն տեսքով, ինչ հունվարի 26-ին ներկայացրել է «Թաքվիմ» թերթը «ԱՍԱԼԱ-ի հետքը տանում է դեպի Չիկագո» վերնագրով.

*Տես էջ 5*

# Թոշակառուներն իրենք կընտրեն, թե ինչպես ստանան թոշակները

## *Բանկերի՞ց, թե՞ այլ կազմակերպություններից, կանխի՞կ, թե՞ անկանխիկ*

Հունվար ամսին կենսաթոշակների վճարման իրավիճակն, ինչպես հայտնի է, քննարկման առարկա դարձավ կառավարության նիստում: Խնդիրն այն էր, որ մեծ հերթեր առաջացան «Հայփոստի» բաժանմունքներում, թոշակառուների մի մասը չկարողացավ ստանալ իրեն հասանելիք գումարը, ինչը, բնականաբար, դժգոհությունների տեղիք տվեց:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Արթուր Գրիգորյանը**, պատասխանելով վարչապետ Տիգրան Սարգսյանի հարցադրմանը, որոշակի բացատրություններ տվեց, թե ինչ փոփոխություններ են կատարվել, եւ որոնք են եղել նման իրավիճակի առաջացման պատճառները: Սակայն թոշակառուներին առավել հետաքրքրում է հարցը, թե ի՞նչ է արվել, որպեսզի փետրվարից սկսած նման իրավիճակներ չառաջանան եւ իրենք կարողանան ժամանակին եւ առանց խոչընդոտների ստանալ թոշակները:



Ըստ նախարարի, կատարվել էր կենսաթոշակների վճարման կարգի փոփոխություն, որի նպատակն էր բարելավել կենսաթոշակառուներին մատուցվող ծառայությունների որակը, նվազեցնել վճարման գործընթացում եղած կոռուպցիոն ռիսկերը, հնարավորություն տալ բոլոր բանկերին եւ վճարահաշվարկային կազմակերպություններին ընդգրկվելու գործընթացում:

Ներկայումս արդեն աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը պայմանագրեր է կնքել 12 բանկերի եւ 5 կազմակերպությունների հետ: Դրանք են՝ «Արդշինինվեստբանկը», «ԱԿԲԱ-Կրեդիտ ագրիկոլ բանկը», «Առէքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբը», «Արարատբանկը», «Զարգացման հայկական բանկը», «Կոնվերս բանկը», «Հայբիզնեսբանկը», «Հայէկոնոմբանկը», «Մելլաթ բանկը», «Յունիբանկը», «Պրոմեթեյ բանկը», «ՎՏԲ-Հայաստան բանկը», ինչպես նաեւ վճարահաշվարկային կազմակերպություններից՝ «Հայփոստը», «Կվադրակոմը», «Մեգա պանտերան», «Իդրամը», «Ադալ եւ Ռիան»: Կենսաթոշակառուն կարող է ընտրել, թե դրանցից ո՞ր մեկից ստանալ թոշակները եւ ի՞նչ ձեւով՝ կանխի՞կ, թե՞ անկանխիկ:

Կենսաթոշակների վճարման կանխիկ եղանակն ընտրած կենսաթոշակառուին թոշակը շարունակվելու է վճարվել գործող կարգով, այսինքն՝ կենսաթոշակառուի բնակության վայրի հասցեում կամ վճարող կազմակերպության գրասենյակում՝ առձեռն կենսաթոշակառուին տրամադրելու միջոցով: Նախարարության հետ պայմանագրեր կնքած վերոնշյալ բոլոր կազմակերպությունները կարող են քաղաքացիներին մատուցել կենսաթոշակի վճարման ծառայություններ: Կենսաթոշակառուն կարող է դիմել կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում՝ կենսաթոշակ վճարող բանկը կամ կազմակերպությունը ընտրելու կամ փոխելու համար: Առաջ անցնելով նշենք՝ հավանական է, որ կենսաթոշակառուների մեծ մասը, գոնե սկզբնական շրջանում, ընտրի թոշակների ստացման գործող՝ կանխիկ տարբերակը, քանի որ նրանց համար հավելյալ բարդություն է նոր տարբերակներին ծանոթանալը եւ նոր իրողություններին հարմարվելը:

Այդուհանդերձ, կլինեն կենսաթոշակառուներ, որոնք կընտրեն թոշակներ ստանալու անկանխիկ տարբերակը, ինչը նշանակում է, որ կենսաթոշակը վճարվելու է կենսաթոշակառուի բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Դա հնարավորություն կտա կենսաթոշակառուին իր բանկային հաշվին փոխանցված կենսաթոշակի գումարը տնօրինելու առանց որեւէ ժամկետի սահմանափակման՝ բանկի հետ պայմանավորվելով գումարի կանխիկացման ձեւի վերաբերյալ: Ի՞նչ պետք է անի այս տարբերակով թոշակը ստանալու ցանկություն ունեցող կենսաթոշակառուն:

Կենսաթոշակառուն պետք է այցելի նախարարության հետ պայմանագիր կնքած բանկերից որեւէ մեկը եւ բացի բանկային հաշիվ: Ընդ որում, բանկային հաշվի բացումը եւ սպասարկումը, այդ թվում՝ քարտերի թողարկումը եւ տրամադրումը, բանկային (քարտային) հաշվից միջոցների կանխիկացումը տվյալ բանկի սպասարկման կետերում, որպես պետության կողմից երաշխավորված հիմնական ծառայություններ, կենսաթոշակառուին մատուցվելու են անվճար: Բանկերին այդ ծառայությունների համար վճարելու է պետությունը: Այնուհետեւ, կենսաթոշակառուն պետք է այցելի իր բնակության վայրի կենսաթոշակ նշանակող տարածքային բաժին եւ ներկայացնի համապատասխան դիմում՝ նշելով բանկի անվանումը եւ իր բանկային հաշվի համարը:

Միանշանակ է, որ թոշակների վճարման կարգի վերոնշյալ փոփոխությունները շահավետ են նախեւառաջ թոշակառուներին, ապա նաեւ պետությանը: Սակայն ցանկացած լավ գաղափար հարկ է նաեւ լավագույնս կենսագործել: Այլապես, գոհունակության փոխարեն դժգոհություններ են առաջանում, ինչպես եղավ թոշակների վճարման հարցում հունվարին: Հուսանք, որ փետրվարին իրավիճակն այլ կլինի, եւ որ մեր այս հրապարակումը նույնպես կնպաստի, որ թոշակառուները իրազեկ լինեն թե ինչպե՞ս եւ ո՞ր կազմակերպություններից կարող են ստանալ իրենց թոշակները:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

***ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԸ ԱՅՑԸ ԹԵՀՐԱՆ***

# Իրան-Հայաստան նավթատարը՝ քննարկման փուլում

**Հայաստանն ու Իրանը համաձայնել են խողովակաշար կառուցել իրանական նավթի տեղափոխման համար: Հայաստանի էներգետիկայի եւ բնական ռեսուրսների նախարար Արմեն Մովսիսյանի եւ Իրանի նավթի նախարար Մասուդ Միրկազեմիի շաբաթ օրը տեղի ունեցած հանդիպման մասին տեղեկացնում են իրանական լրատվամիջոցները՝ հղում անելով Իրանի նավթի նախարարի պաշտոնական կայքէջին:**

**Իրանի նավթի նախարարը նշել է, որ խողովակաշարը սկիզբ կառնի Թավրիզ քաղաքից եւ ուղիղ գծով կհասնի մինչեւ հայկական սահման: Միրկազեմին ընդգծել է, որ այդ խողովակաշարը կարող է օգնել Հայաստանին՝ բավարարելու նավթամթերքների իր կարիքների մի մասը Իրանի Իսլամական Հանրապետության նավթի միջոցով: Իրանի նավթի նախարարը այլ մանրամասներ չի հաղորդել, միայն հավելելով, որ նավթամթերքների արտահանման ծավալներն ու գինը կորոշվեն մոտ ապագայում կայանալիք հանդիպմանը:**

**Իրանական աղբյուրները հիշեցնում են, որ հունվարի 29-ի հանդիպման նախօրեին Հայաստանի էներգետիկայի եւ բնական ռեսուրսների նախարարը հանդիպել է նաեւ Իրանի արտգործնախարարի ժամանակավոր պաշտոնակատար Աքբար Սալեհիի հետ եւ քննարկել հարեւան երկրները կապող երկաթգծի շինարարությանն առնչվող հարցեր: «Իրանն ու Հայաստանը որեւէ քաղաքական խնդիր չունեն, եւ դա լավ հիմք է տարբեր ոլորտներում կապերը ընդլայնելու համար», ասել է Մովսիսյանը:**

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

***Հ.Գ. Այն ժամանակ, երբ իրանական մի շարք աղբյուրներ տեղեկացնում են Հայաստանի էներգետիկայի եւ բնական ռեսուրսների նախարարի այցելության մասին, նույն նախարարության կայքէջում ամենաթարմ նորությունը վերաբերում է նախարարի՝ անցյալ տարեվերջին տարին ամփոփելու ասուլիսին: Հերթական անգամ առիթ ունենք տեսնելու, թե ինչպես հայրենական գերատեսչություններն մեզ անտեղյակ են պահում, ու հետո էլ, կրկին առիթի դեպքում, հանդիմանում, թե օտարերկրյա աղբյուրներին հայկական մամուլը հղումներ շատ է անում: Ախր էլ ո՞նց չանես...***

# Հայաստանի սահմանային անցակետերը կհամապատասխանեցվեն միջազգային չափանիշներին



**Հայաստանի սահմանային անվտանգության ապահովման եւ պետական սահմանի համալիր կառավարման ռազմավարության հաստատումից հետո ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որը կդիտարկի ռազմավարության դրույթներով նախատեսված ծրագրերի իրականացման ընթացքը:**

**Հանձնաժողովի՝ հունվարի 31-ին կայացած անդրանիկ նիստում հանձնաժողովի նախագահ, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը նշել է, որ Հայաստանում սահմանային անվտանգության մակարդակի առավել բարձրացման, սահմանային ենթակառուցվածքների արդիականացման, պետական սահմանի համալիր կառավարման գործընթացները մեր պետության համար գերակա նշանակություն ունեն. «Այսօր աշխատում ենք երկու հիմնական ուղղություններով՝ Ռուսաստանի հետ՝ Իրան-Թուրքիա պետական սահմանի երկայնքով սահմանային ենթակառուցվածքների եւ ուղեկալների արդիականացման եւ ԵՄ-ի հետ՝ Հարավային Կովկասում պետական սահմանների համալիր կառավարման շրջանակում:**

**Ռուսաստանի հետ արդեն ստորագրվել է համապատասխան արձանագրություն, եւ շուտով ձեռնամուխ կլինենք 2011-2015 թվականների պլանի իրագործման աշխատանքներին: Մարտին սպասվում է ՌԴ սահմանապահ զորքերի հրամանատարի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:**

**ԵՄ-ի հետ նախաձեռնում ենք աննախադեպ լայն գործընթաց, որի նպատակն է արդիականացնել Վրաստանի հետ Հայաստանի պետական սահմանի բոլոր երեք անցակետերը՝ Բագրատաշենի, Գոգավանի, Բավրայի, ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխան սահմանային անցակետեր եւ հասնել նրան, որ մի կողմից՝ ունենանք հուսալիորեն պաշտպանված պետական սահմաններ, մյուս կողմից՝ ապահովենք մարդկանց եւ ապրանքների հնարավորինս դյուրին տեղաշարժը»:**

**Արթուր Բաղդասարյանի համոզմամբ՝ ծրագրի իրականացումը ենթադրում է նաեւ կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, կառավարման ոլորտում լուրջ բարեփոխումների իրականացում: Այսօր պետական յոթ մարմիններ առնչություն ունեն պետական սահմանին, անհրաժեշտ է հստակեցնել նրանց գործառույթները, եւ գործընթացը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին:**

**Նիստում հաստատվել է հանձնաժողովի գործողությունների ժամանակացույցը, որոշվել է մայիսի սկզբին ավարտել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի մշակումը եւ հունիսից մեկնարկել ենթակառուցվածքների արդիականացման գործընթացը: Ծրագրի իրականացման գործում կներգրավվեն նաեւ ԵՄ-ի եւ ՄԱԿ-ի փորձագետները:**

**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ**

# Արցախի համար ձեռք բերելիք CRJ200-ները 16 մլն չարժեն, նաեւ շատ թանկ են պահեստամասերը

CRJ200 ինքնաթիռները չարժեն 16 մլն դոլար եւ դրանք գումար աշխատող չեն, այլ Արցախի բնակչությանը կարող են սնանկացնել: Այսպիսի կարծիք է հայտնել «**Ազգի**» ընթերցողներից **Զավեն Թորոսյանը**, որ ներկայացել է որպես օդանավերի շահագործման ոլորտում հիսուն տարվա փորձառություն ունեցող մասնագետ:

Դեռեւս նախորդ տարեվերջին՝ դեկտեմբերի 17-ին «**Ազգը**» տեղեկացրեց, որ Ստեփանակերտի օդանավակայանը արդեն գարնանը կարող է շահագործվել: «Ճախրող թռչունի» տեսքով եւ 1200 քմ ընդհանուր տարածք զբաղեցնող օդանավակայանը Ստեփանակերտից 8 կմ է հեռու:

ԼՂՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչության (ՔԱՎ) աշխատակազմի ղեկավար Դմիտրի Աղբաշյանը պատմել էր, որ օդանավակայանի վերակառուցման ընդհանուր արժեքը կազմում է 5 մլն դոլար: «Վերակառուցման աշխատանքներն ավարտելուց հետո օդանավակայանը կկարողանա ընդունել CRJ200 մակնիշի կանոնդական օդանավերը: Նման երկու ինքնաթիռ է նախատեսվում ձեռք բերել:

Օդանավակայանը կկարողանա ընդունել նաեւ AIRBUS-320 տիպի ինքնաթիռներ, սակայն դրանք մեր օդանավակայանի համար մեծ կլինեն», ասել էր Աղբաշյանը: Աղբաշյանը հավաստիացրել էր, թե ինքնաթիռներ գործարկելը տնտեսապես շահավետ կլինի: Անձամբ բիզնես պլան է մշակել, պարզվել է, եթե օդանավը թեկուզ 70 տոկոսով բեռնված լինի, ապա կարելի է թռիչքը շահավետ որակել:

Բեյրութի միջազգային օդանավակայանում որպես որակի վերահսկողության մենեջեր աշխատող Զավեն Թորոսյանն, իր նամակում դիմելով Դմիտրի Աղբաշյանին, գրում է, որ նախ CRJ200 ինքնաթիռները ավելի էժան են, քան դրանց համար նախատեսված գումարը, բացի դրանից, այդ ինքնաթիռները թանկ են շահագործման առումով, քանի որ բավականին թանկ են դրանց պահեստամասերը: Ավելին, ըստ գրեթե տասը տարի նույն CRJ200 ինքնաթիռների շահագործման փորձ ունեցող Թորոսյանի, այդ ինքնաթիռների շատ դետալներ ուղղակի անհնար է գտնել:

«Խնդրում եմ, լավ մտածեք մինչեւ կգնեք այդպիսի ինքնաթիռներ», Բեյրութից զգուշացնում է Զավեն Թորոսյանը:

**Ա. Հ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Մենք կրճատվող ազգերի ցուցակում ենք», նշում է սոցիոլոգը




Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի եւ ժողովրդագրության բաժնի պետ **Կարինե Կույումջյանը** երեկ «Դե ֆակտո» ակումբում հրապարակեց 2010 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին արձանագրված ժողովրդագրական հիմնական ցուցանիշները: 2010-ի ընթացքում արձանագրվել է 44810 կենդանի ծնունդ, 2009 թվականի համեմատությամբ այս ցուցանիշն ավելացել է շուրջ 1 տոկոսով: Մահացության ցուցանիշներում 2010-ին արձանագրվել է աճ, որը 2009-ի համեմատությամբ կազմել է 1,6 տոկոս: 2010-ին գրանցվել է 28800 մահվան դեպք, իսկ 2009-ին այդ ցուցանիշը 27560 էր: Համաձայն ծննդյան ու մահվան դեպքերի փոփոխության՝ բնակչության բնական հավելաճի ցուցանիշը չի փոփոխվել: Կարինե Կույումջյանն ասում է, որ Հայաստանում միշտ էլ ավելի շատ տղա երեխաներ են ծնվել, քան աղջիկներ: 2010-ին մեր երկրում ծնվել են 20924 աղջիկ երեխա եւ 23886 տղա երեխա: Կ. Կույումջյանը տեղին համարեց անդրադառնալ նաեւ անունների ցուցանիշներին: Անցյալ տարի աղջիկներին ավելի շատ կոչել են Մանե անունով՝ 923 երեխայի, այնուհետեւ նախապատվությունը տվել են Անի, Միլենա, Անահիտ անուններին: Իսկ տղաներին ավելի շատ կոչել են Նարեկ անունով՝ 1199 հոգու: Դրանից հետո նախապատվություն են տվել Դավիթ, Գոռ եւ Էրիկ անուններին:

Ազգային վիճակագրական ծառայության տվյալները ցույց են տալիս, որ մարզերի կտրվածքով ծնելիության ցուցանիշը ցածր է միջին հանրապետական ցուցանիշից Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի եւ Տավուշի մարզերում: Իսկ մահացության ավելի բարձր ցուցանիշներն անցյալ տարի արձանագրվել են Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Վայոց Ձորի եւ Տավուշի մարզերում: Կարինե Կույումջյանը նշեց, որ Սյունիքի, Լոռու եւ Տավուշի մարզերում բնական հավելաճը խիստ նվազ է: Անդրադառնալով մահացության պատճառներին՝ Կ. Կույումջյանը տեղեկացրեց, որ ավելացել են արյան շրջանառության համակարգի հիվանդություններից, դժբախտ պատահարներից, վնասվածքներից, նորագոյացություններից ու թունավորումներից մահվան դեպքերը: 2009 թվականի համեմատությամբ՝ 2010-ին ավելացել են նաեւ ինքնասպանության եւ ինքնասպանության փորձերի ցուցանիշները. 2010-ին արձանագրվել է 592 դեպք, մինչդեռ 2009-ին այդ թիվը 498 էր:

Անդրադառնալով անցյալ տարվա ամուսնությունների թվին՝ Կ. Կույումջյանը ասաց, որ 2010-ին գրանցվել է 17984 ամուսնություն, 2009-ին գրանցվել էր 18773 դեպք: Ամուսնությունների թիվը նվազել է, սակայն ավելացել է ամուսնալուծությունների ցուցանիշը, փոխանակ հակառակը տեղի ունենար: 2010-ին գրանցվել է ամուսնալուծության 2997 դեպք, իսկ 2009-ին՝ 2829:

Ինչ վերաբերում է միգրացիայի ցուցանիշներին, Կարինե Կույումջյանը նշեց, որ այդ թվերը ազգային վիճակագրական ծառայությունը ստանում է ոստիկանության անձնագրային բաժինների տվյալներով: Նա տեղեկացրեց, որ 2010-ին Հայաստան եկածների եւ այստեղից մեկնածների տարբերությունը կազմել է 4119 մարդ, այսինքն՝ ավելի շատ մեկնել են, քան ժամանել. մեկնել են 12013 հոգի, ժամանել՝ 7894-ը:

Ասուլիսի մյուս բանախոսը՝ «Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնի ղեկավար **Ահարոն Ադիբեկյանը** նշեց, որ միջազգային կառույցներում Հայաստանը համարվում է ընդամենը 3 միլիոն բնակչություն ունեցող ազգ: Սոցիոլոգն ասում է, որ մենք կրճատվող ազգերի ցուցակում ենք, քանի որ կրճատվում է ամուսնությունների, ծնունդների թվաքանակը, եւ մեծանում է թոշակառուների թվաքանակը: Իր ծնելիության ցածր մակարդակով Հայաստանն արդեն հայտնվել է Կարմիր գրքում:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՑԻՈԼՈԳԻ ԿԱՐԾԻՔՈՎ

# «Ժողովրդի համար միեւնույնն է՝ կընտրվի Կոնգրեսը, Հանրապետականը, թե Դաշնակցությունը»

Հայաստանում կատարվող սոցիալ-տնտեսական իրադարձությունները կվճռեն առաջիկա ընտրությունների ելքը: Նախընտրական շրջանում դաշինքների կազմումն ու երկրի ներքին իրավիճակն էլ ցույց կտան՝ քաղաքական դաշտում էական փոփոխություններ կպատահեն, թե՞ ոչ:

Ընտրությունների արդյունքները պայմանավորված կլինեն նաեւ ղարաբաղյան հիմնախնդրի փոփոխություններով:

Սոցիոլոգների հայկական ասոցիացիայի նախագահ **Գեւորգ Պողոսյանը** 2012-ի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ քաղաքական կուսակցությունների վարկանիշի վերաբերյալ սոցիոլոգիական հարցում է անցկացրել: Հարցմանը մասնակցել է 1000 հոգի: Թեպետ պատվիրատուն խնդրել է չհրապարակել թվերը, սակայն վարկանշային սանդղակով առաջին հորիզոնականը զբաղեցնում է ՀՀԿ-ն: Առաջատարին հաջորդում են՝ ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՀԱԿ-ը եւ Ժողովրդական կուսակցությունը:

«Ժողովրդի համար միեւնույնն է՝ կընտրվի Կոնգրեսը, Հանրապետականը, թե Դաշնակցությունը: Նրանց համար կարեւոր է, որ ապրեն նորմալ, բարեկիրթ երկրում: Կոռուպցիան վերանա, մարդիկ լավ ապրեն: Ով այս խնդիրները կլուծի, ընտրողը նրան կողջունի», նշեց սոցիոլոգը:

Հայաստանի թիվ մեկ խնդիրը շարունակում է մնալ արտագաղթը: Արտագաղթողների մեծ թիվը պայմանավորված է ղարաբաղյան պատերազմի վերսկսման վտանգով: «Որքան ավելանում է հնարավոր պատերազմի վտանգը, այնքան արտագաղթի ալիքը հզորանում է: Բոլոր ոլորտներում, որոնք այսօր սոցիոլոգները վերլուծում են, առողջապահություն, կրթություն, պաշտպանություն եւ այլն, նկատվում է դեգրադացիա, նահանջ», ասաց Պողոսյանը:

Նրա մեկնաբանությամբ՝ 21-րդ դարում կլինեն երկրներ, որոնք սնանկ կճանաչվեն, կլուծարվեն: Այն երկրները, որոնք չեն կարողանա ճիշտ կառավարում իրականացնել, մեծ տերությունների կողմից կլուծարվեն, ու կընդգրկվեն այլ միավորների մեջ: Հայաստանում միտումները բացասական են: Սոցիոլոգը խորհուրդ է տալիս ամեն օր մոմ վառել, որ Հայաստանն ինքնալիկվիդացման ճանապարհով չգնա:

Հ. Հ.

# Ռումինիայում ՀՀ դեսպանը հանդիպել է վարչապետ Էմիլ Բոկին

Հունվարի 28-ին Ռումինիայի վարչապետ **Էմիլ Բոկն** ընդունել է Հայաստանի դեսպան **Համլետ Գասպարյանին**: Զրուցակիցները մտքեր են փոխանակել մի շարք ոլորտներում հայ-ռումինական կապերի խթանման եւ ամրապնդման կոնկրետ ծրագրերի շուրջը: Այս առումով վարչապետ Բոկը կարեւորել է առաջիկա մարտի 10-ին Բուխարեստում գումարվելիք առեւտրատնտեսական եւ գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստը:

Մինչ այդ դեսպան Գասպարյանը հանդիպել է ՀԲԸՄ Եվրոպական վարչության նախագահ **Ալեքսի Գյովճյանի** եւ եվրոպական տարբեր երկրների Բարեգործականի ներկայացուցիչների հետ: Նույն օրը Համլետ Գասպարյանը, Ալեքսի Գյովճյանը, Ռումինահայոց միության նախագահի **Վարուժան Ոսկանյանը**, Ռումինիայի խորհրդարանի ազգային փոքրամասնությունների ղեկավար **Վարուժան Փամբուկչյանը** զրուցել են ազգամիջյան հարաբերությունների վարչության պետ **Աթիլա Մարկոյի** հետ:

Հավելենք նաեւ, որ առաջիկա շաբաթ օրը ՀԲԸՄ-ը Բուխարեստի Դուդյան սրահում կգումարի իր հերթական տարածաշրջանային ժողովը, որի շրջանակներում նախատեսված են հանդիպումներ ռումինահայ համայնքի հետ, ծանոթացում Հայ առաքելական եկեղեցու, Ռումինահայոց միության ծրագրերին, «Արարատ» հրատարակչության, «Նոր կյանք» եւ «Արարատ» պարբերականների աշխատանքներին՝ նպատակ ունենալով ամրապնդել վերջիններիս կապերը եվրոպական մյուս հայկական համայնքների հետ եւ խթանել նրանց առավել ներգրավվումը համահայկական կյանքում:

Հ. Ա.

# Նախագահականից մեկնաբանում են երկպալատ խորհրդարանի անցնելու գաղափարը

Հայաստանի Նախագահի մամուլի քարտուղար **Արմեն Արզումանյանը** մեկնաբանել է տեղեկությունը, ըստ որի Սերժ Սարգսյանը մտադիր է սահմանադրության փոփոխությամբ Հայաստանում ձեւավորել երկպալատ խորհրդարան, որի վերին պալատում կլինեն նաեւ սփյուռքի ներկայացուցիչներ: Այդ մասին նշել է սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** Կալիֆոռնիայում հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ: «Դեռ 2010 թ. մայիսին «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկում էր տեղի ունեցել Հայաստան-Սփյուռք կապերի ընդլայնման ուղիների մասին, եւ առաջարկվել էր խորհրդի անդամներին մեկ տարի անց գաղափարներ ներկայացնել այդ առնչությամբ: Սա հնարավոր առաջարկներից մեկն է, որ բազմաթիվ ուրիշների շարքում արժանի է քննարկման: Միեւնույն ժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ սահմանադրության փոփոխությունը պատասխանատու քայլ է ու նախատեսում է բարդ եւ երկարատեւ ընթացակարգ: Նման որոշում կայացնելու համար բնականաբար պետք է տեղի ունենան հանրային քննարկումներ եւ մասնագիտական մանրակրկիտ ուսումնասիրություններ», նշել է Արմեն Արզումանյանը:

Հ. Ա.

# Ո՞վ է կեղծ եւ ո՞վ իսկական ընդդիմությունը, եւ ո՞վ է ամենաիշխանությունը

*1-ին էջից*

Իշխանական թեւում էլ անհանգիստ են՝ բոլորին շարունակում է տանջել այն միտքը, թե ե՞րբ ի հայտ կգա Ռոբերտ Քոչարյանը եւ ո՞ր ուժի թիկունքից: Ու երբ ԲՀԿ նախագահ **Գագիկ Ծառուկյանը** Երիտասարդական կուսակցության համագումարին ասաց, որ եթե Ռ. Քոչարյանը ուզենար քաղաքականություն վերադառնալ՝ ժամանակին կգլխավորեր ՀՀԿ-ն կամ կդառնար նրա պատվավոր նախագահը, սա բավական եղավ, որ իշխանական, ավելի շուտ՝ նրա ՀՀԿ-ական հատվածում ալեկոծում առաջանա: ՀՀԿ փոխնախագահ **Ռազմիկ Զոհրաբյանը** Ծառուկյանին ուղերձեց, թե ավելի պարզ ասա մտքիդ, թե չէ՝ «հետագայում ուրիշ խորհուրդներ կտանք»: Այս ասելուց հետո Զոհրաբյանը մեղմվել եւ բացատրել է, թե Քոչարյանի հետ ՀՀԿ-ի համագործակցության 10 տարվա ընթացքում վերջինս երբեք ցանկություն չի հայտնել գլխավորելու ՀՀԿ-ն, Քոչարյանն էլ ինքը կարող է իր ցանկությունների մասին հայտնել: Շարունակելով իր գործընկերոջը՝ երեկ արտահայտվել է նաեւ ՀՀԿ մամուլի խոսնակ **Էդուարդ Շարմազանովը**, որն անգամ կոռեկտության կոչ է արել Ծառուկյանին՝ այդպիսի հայտարարությունները կառուցողական չհամարելով եւ ԲՀԿ-ի երեսով տալով, թե ՀՀԿ-ն երբեք այդպիսի թեական-պայմանական հայտարարություններ չի արել ԲՀԿ-ի կամ Ծառուկյանի վերաբերյալ: Այս բոլորի ֆոնին հետաքրքրական են այն նոր միացումները, որոնք կան ՀՀԿ եւ ԲՀԿ ուղղությամբ, կարծես այս երկուսը մրցում են, թե ո՞վ ավելի քանակ կապահովի: Հունվարի 29-ին Հայաստանի Երիտասարդական կուսակցությունը որոշեց ընդգրկվել ԲՀԿ-ում, հունվարի 28-ին մի նոր կուսակցություն էր ստեղծել նախկին ՀՀԿ-ական Սիմոն Ղոնադչյանը՝ հավանաբար կամ ՀՀԿ-ին կսատարի առաջիկայում, կամ... ով գիտե, իսկ երեկ տարածված հայտարարության մեջ համահայկական միջազգային երիտասարդական կենտրոնն իր ընդլայնված ժողովում որոշել է ՀՀԿ շարքերը համալրել՝ շարժման «բազմահազար անդամներով»:

Հետաքրքրական է, որ երեկ բավական աշխուժություն էր առաջացրել այն լուրը, որ նախագահ Սարգսյանը սահմանադրության փոփոխությամբ Հայաստանի խորհրդարանը ցանկանում է դարձնել երկպալատ՝ սփյուռքի ներկայացուցիչներին եւս ընդգրկելով այնտեղ՝ այդպիսով սփյուռքի հայությանը եւս դարձնելով Հայաստանի կառավարման մասնակից: Չնայած երկպալատ խորհրդարանի մասին խոսակցություններ տարբեր պատգամավորներ զրույցների մակարդակով բարձրաձայնել են, սակայն՝ ա՛յլ ընդգրկումով եւ ա՛յլ նպատակներով, իսկ սփյուռքն ընդգրկելու խոսակցությունը երբեք ռեալ չի համարվել, քանի որ նախ՝ մեր սահմանադրությունն, իրոք, ոչ Հայաստանի քաղաքացիներին ընտրվել չի թույլատրում, հետո՝ բազմաթիվ շահեր խաչաձեւող մեր տարածաշրջանում եւ մեր երկրում հատկապես այդպիսի քայլը լրացուցիչ վտանգներ կստեղծեր Հայաստանի համար՝ երբեք չես իմանա, ի վերջո, թե այդպիսի պատուհանից, ի թիվս հայրենանվեր մարդկանց, ո՞վ ներս կանցնի, չի՞ կարող այդպես վարվել որեւէ այլ երկրի մի Աննա Չապման: Բայց ամենից հետաքրքրականն այն է, որ այսպիսի լուրը լսում ես ոչ թե խորհրդարանական շրջանակներից, այլ՝ Կալիֆոռնիայում գտնվող մեր սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանից, ով այս միտքը հայտնել է մեր հայրենակիցների հետ հանդիպման ժամանակ: Պատկերացրեք, թե որքան շոյիչ է մեր հայրենակիցների համար՝ լսելու, որ իրենք կամ իրենց ներկայացուցիչները ապագայում կարող են հայտնվել Հայոց խորհրդարանի վերին պալատում, եւ որքան նրանք դեպի Հայաստանն ու նրա նախագահը կտրամադրվեն այդպիսի գաղափարի շոշափելի դառնալով: Եթե վարկանիշային խնդիր է լուծվում՝ որոշ ժամանակ տասին կարող է խփել այդպիսի լուրի շրջանառումը, բայց գործնականում դա հազիվ թե մարմին ստացող գաղափար է եւ կարող է շուռ գալ իրեն ծնողի դեմ:

Ու մինչ արաբական աշխարհը համաճարակի նման արագ բռնկվում է ամեն ինչ կործանող քաոսով, ինչն այդ երկրները զարգացման առումով հետ է շպրտելու տասնյակ տարիներով (դա տվյալ արաբական երկրները տասնյակ տարիներով բռնապետած ղեկավարների խղճին է՝ հանգիստ ու առանց իրենց երկրները քանդելու կհանձնեին իշխանությունն ու կգնային, ու չէին ուզենա արաբական քարերով իրենց արմատական ղեկավարումը ժառանգություն թողնել իրենց սիրասուն զավակներին), ու մինչ վիրահատական թերապիա են աշխատեցնում հեղափոխությունների ճարտարապետները, որոնք սակայն կարող են կորցնել վերահսկողությունը բազմադեմ արաբական աշխարհում, մերոնք բոլորը բարձրաձայնում են, թե արաբական տարբերակը Հայաստանում ընդհանրապես հազիվ թե դիտարկվի, ու նույն՝ ամենահաս Շարմազանովը հսկա տարբերություն է տեսնում. մեզ մոտ խնդիրները սոցիալական են՝ Եգիպտոսում արժեքային համակարգի եւ աշխարհաքաղաքական զարգացման արդյունք: Բայց «սոցիալական բունտի» մասին դատողությունները վերջին օրերին, այնուամենայնիվ, մերոնցից շրջանառողներ կան, եւ չարժե ընդհանրապես միամտվել: Չնայած՝ մենք էլ պակաս խնդիրներ չունենք, փաստորեն, հենց թեկուզ ԵԽԽՎ-ում ԼՂ հարցով ենթահանձնաժողովի վերակենդանացումը, որ փաստորեն Մինսկի խմբի ֆորմատից դուրս Չավուշօղլուի հաջողեցրած դեռ միակ կառույցն է լինելու, որի առումով մերոնք դեռեւս դիրքորոշում պետք է որդեգրեն: Ասել, որ դա մեզ գլխացավանք չի պատճառելու, թերեւս ճիշտ չէ, չասել, որ Չավուշօղլուի մտադրությունն ակնհայտ էր ամիսներ առաջ, ու մերոնք դրա դեմն առնել չկարողացան՝ էլի ճիշտ չէ: Օրինակ ՀՅԴ-ական **Լիլիթ Գալստյանը** կարծում էր, թե ԵԽԽՎ-ում այդ ենթահանձնաժողովի ստեղծման պատասխանատվությունը կրում է քաղաքական մեծամասնությունը:

# Ինչպես անցնել 15 տարին

## *«Ֆլեշի» ճանապարհը՝ օրինակ մյուսների համար*

Հայաստանյան իրականության մեջ շատ չեն ընկերությունները, որոնք, բացի բիզնես նպատակներ հետապնդելուց, ձգտում են համահունչ գործել պետության եւ հասարակության շահերին, ստեղծում հայտնի ապրանքանիշ, բիզնես ավանդույթներ, բարի համբավ, համատեղում են բարեգործությունն ու խոշոր հարկատու լինելը: Բենզին եւ դիզվառելիք ներկրող «Ֆլեշ» ընկերությունն, առանց չափազանցության, լավագույնս իր մեջ ընդգրկում է այս հատկանիշները: Ուղիղ 15 տարի առաջ ստեղծված, իսկ այժմ արդեն Հայաստանի խոշորագույն այս ընկերությունը, ի տարբերություն շատ ուրիշների, չգնաց պատեհապաշտական լուծումների, տուրք չտվեց կարճատեւ գերշահույթներ ստանալու գործելակերպին:

«Ֆլեշի» նախագահ **Բարսեղ Բեգլարյանը**, մինչեւ գործարարությամբ զբաղվելը, արցախյան պատերազմի տարիներին ակտիվորեն մասնակցում էր իր ծննդավայրի՝ Ասկերանի շրջանի Խանաբադ գյուղի ինքնապաշտպանությանը, ապահովում տեղի պաշտպանական ջոկատի նյութատեխնիկական բազան: Պատերազմից հետո արդեն իր համախոհների հետ հիմնադրեց «Ֆլեշը», ընտրելով ամենօրյա համառ աշխատանքով ընկերության զարգացման ճանապարհը: Այսօր, 15 տարի անց, այդ աշխատանքի արդյունքներն ակնհայտ են:

«Ֆլեշն» այսօր վառելիքի հայկական շուկայի առաջատարն է՝ զբաղեցնելով դրա շուրջ 40 տոկոսը: Ընկերությունում, ներառյալ բենզալցակայանների ցանցում, ներգրավված են շուրջ 350 աշխատակիցներ: Գործունեության ընթացքում ընկերությունը ձեռնամուխ է եղել վառելիքի պահեստավորման նպատակով խոշոր բազաների ստեղծմանը, որոնք տնտեսական ճգնաժամի պայմաններում կարող են ունենալ ռազմավարական նշանակություն, իսկ պատերազմի կամ շրջափակման դեպքում կդառնան երկրի պաշտպանական համակարգի բաղկացուցիչ մասերից մեկը: Պահեստավորված վառելիքի ծավալների ավելացման քայլի իրավացի լինելն ապացուցվեց 2008-ին՝ ռուս-վրացական պատերազմի ժամանակ, երբ մեր երկիր չէին մտնում բենզին եւ դիզվառելիք, իսկ վառելիքի պահանջարկը առավելապես սպասարկվում էր «Ֆլեշի» պահուստներից: 2008-ի դասերը հաշվի առնելով էլ ընկերությունն ընդլայնեց պահեստավորման բազաները, ներկայումս դրանցում կարելի է պահեստավորել այնքան վառելիք, որքան մնացած վառելիք ներկրող ընկերությունների բազաները միասին վերցրած:

Ինչպես արդեն նշեցինք, «Ֆլեշն» աչքի է ընկնում նաեւ պետության հանդեպ պարտավորությունների կատարմամբ: Բավական է միայն նշել անցած 15 տարիների ընթացքում ընկերության կատարած հարկային վճարումների չափը՝ 300 մլն դոլար: Նման ցուցանիշով Հայաստանում քչերը կարող են հպարտանալ: Միայն անցած տարի «Ֆլեշի» վճարած հարկերն ու այլ վճարումները պետական բյուջե կազմել են 11 մլրդ դրամ: Ընկերությունը մշտապես տեղ է գրավում Հայաստանի 300 խոշոր հարկատուների առաջին հորիզոնականներում:



«Ֆլեշի» զարգացման տեմպերը հնարավորություն ստեղծեցին, որ ընկերության նախագահ Բարսեղ Բեգլարյանը նոր գործունեություն սկսի տնտեսության այլ ճյուղերում եւս՝ ֆինանսական շուկայում եւ իրական հատվածում: Այստեղ նույնպես արդյունքները երկար սպասել չտվեցին: «Արարատբանկը» գոյության բավականին կարճ ժամանակահատվածում իր կայուն տեղը գրավեց Հայաստանի բանկային համակարգում, իսկ Ստեփանակերտի կոնյակի գործարանը դարձավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խոշորագույն ձեռնարկությունն ու 2-րդ խոշոր հարկատուն:

Դինամիկ զարգացող ընկերություն եւ խոշոր հարկատու: Սրանց հարկ է ավելացնել նաեւ ընկերության նախագահ Բարսեղ Բեգլարյանի մշտապես իրականացրած բարեգործական ծրագրերը, որոնց մասին նա չցանկացավ խոսել, մեր հարցմանն ի պատասխան ասելով. «Չենք բարձրաձայնում բարեգործությունը, քանի որ իսկական բարեգործը չպետք է այդ մասին հայտարարի»: Միայն տեղեկատվության հայտնի աղբյուրներից՝ բարեգործական կազմակերպությունների պարտադիր հրապարակման ենթակա հաշվետվություններից, հրապարակային միջոցառումներից հնարավոր եղավ իմանալ, որ «Ֆլեշի» նախագահի ստեղծած «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամը կրթության ոլորտում տարեկան հարյուրհազարավոր դոլարների բարեգործական ծրագրեր է իրականացնում: Բարսեղ Բեգլարյանը նաեւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնների մշտական մասնակիցն է իր խոշոր նվիրատվություններով:

Ցանկալի է, որ Բարսեղ Բեգլարյան հայ գործարարի կերպարը՝ որպես բարեգործի եւ պարտաճանաչ հարկատուի, ընդօրինակելի լինի մեր գործարարների համար, իսկ «Ֆլեշի» օրինակը՝ նրանց ընկերությունների համար, որ «Ֆլեշի» եւ Բարսեղ Բեգլարյանի հիմնադրած մյուս ընկերությունների հերթական ամյակները վերածվեն նրանց գործունեության նորանոր հաջողությունների մասին վկայող միջոցառումների:

**Ա. Ս.**

# «Արմենիա»-ին սպասում են Չիլիում



Հիմա թխկթխկացնում եմ գրամեքենաս, նստած տախտակամածի կոկպիտում: Վաղորդյան երկնքում երեւում է իր չափերի մեջ նվազող լուսինը: Գիտեմ, որ լիալուսինն արդեն անցել է: Բայց մենք չտեսանք այն: Ճիշտ է, հիշում եմ՝ Հորն հրվանդանից անմիջապես առաջ մի որոշ ժամանակով ճեղքվեցին խիտ ամպերը, եւ ես տեսա նորալուսինը: Նայեցի ու շվարեցի: Մտովի ուղղահայաց գիծ տարա, եւ չստացվեց ռուսերեն «Ռ» կամ լատիներեն «Պ»: Նշանակում է... նշանակում է, որ սա հարավային կիսագնդի երկինքն է, որտեղ ամեն ինչ ընդհակառակն է: Դրա համար էլ արեւը լուսավորում է հյուսիսից:

Այս ողջ օրերի ընթացքում ինձ ապշեցնում էր այն, որ ջերմաստիճանի օրական կորագիծը կարծես թե չի համապատասխանում տրամաբանությանը: Մագելլանի նեղուցից հետո ուղիղ հյուսիս ենք շարժվում, այսինքն՝ դեպի արեւ, եւ թվում էր, թե օր օրի ավելի է տաքանալու: Բայց ոչ մի նման բան: Ասես ջերմաստիճանի կորագիծ էլ չկա, այլ պարզապես ուղիղ գիծ: Հարց եմ տալիս ինքս ինձ ու չեմ կարողանում պատասխանել: Ու հետո միտք է ծնվում գլխումս, թե գուցե հենց այստե՞ղ է կլիման այդպիսին: Իսկ «այստեղ» նշանակում է միայն ու միայն Չիլիում: Եվ ահա սկսեցի թերթել հատուկ գրքեր, որոնցով լի է իմ գրադարանը: Պետք է գտնել Չիլիի եղանակի առանձնահատկությունների մասին: Զարմանալի աշխարհագրություն ունի: Հարավից հյուսիս ձգվում է 4500 կիլոմետր: Երեւանից մինչեւ Մոսկվա եւ հետ: Իսկ ամենամեծ լայնությունը չի գերազանցում 185 կիլոմետրը: Ավելի քիչ, քան Երեւանից Ստեփանակերտ (ես հաշվում եմ ուղիղ գծով): Հարավում հիշեցնում է Նորվեգիայի կլիման, հյուսիսում՝ Սահարայի: Ի դեպ, չիլիական Ատակամա անապատը շատ ավելի չորային է: Հարավում սառույցներ ու սառցալեռներ են: Կենտրոնում՝ խաղողի այգիներ: Եվ ահա համառորեն, յուրաքանչյուր օրվա հետ շարժվում ու շարժվում ենք դեպի հյուսիս, այսինքն՝ դեպի շոգ, դեպի ջերմություն: Իսկ այն չկա ու չկա: Բայց պետք է, որ պատճառ լինի եւ պետք է այն գտնել: Չէ՞ որ մյուս կողմում, որտեղ Ատլանտիկան է, Արգենտինան է, բոլորովին այդպես չէ: Այնտեղ իսկական եւ չդադարող ցրտերը սկսվեցին միայն Մագելլանի նեղուցից հետո, այսինքն՝ Հրո Երկրի կղզիներում:

Եվ այնուամենայնիվ պատճառը գտա: Իրոք որ, ով փնտրում է... Կարդում եմ Չիլիի մասին. Վալպարաիսո նավահանգստում հունվարին (ամռան կեսերին) միջին ջերմությունը 17,6 աստիճան է, հուլիսին՝ 11,3: Այսպիսին է այստեղի կլիման: Ու վերջ: Բայց շատ ավելի կարեւոր է քամին: Այս վայրերում երեսուն հանգույցից պակաս չի եղել մեր ճանապարհին: Եղանակի կանխատեսումներից գլուխ չես հանի: Դեռ պոռթկումներն էլ իրենց ուղղումներն են մտցնում: Եվ ահա թե ինչ է ստացվում. ուղիղ մեկ շաբաթ մենք համարյա «դոփում» էինք տեղում: Ահռելի ալիքները, ուժգին քամիները թույլ չեն տալիս բարձրացնել մեծ առագաստը: Ստակսելը, ինչպես հայտնի է, մեզ հուսախաբ արեց Հորն հրվանդանում: Պետք է նորոգել: Բարձրացրինք գենուան՝ եռագույնը, այն նույն դրոշ-առագաստը: Իհարկե, ոչ իր լիակատար սահմաններով, հակառակ դեպքում նավը կգլորեր կողքի վրա: Սկսեցին աշխատել միայն ներքեւի երկու գույները՝ նարնջագույնն ու կապույտը, այն էլ՝ ոչ մինչեւ վերջ: Նավը թեքվեց մինչեւ թույլատրելի սահման: Անսպասելիորեն պայթեց ճոպանը: Այո, հենց պայթեց: Ծովային պարաններն ոչ միայն բազմահյուսք են, այլեւ հատուկ թաղանթ ունեն: Հենց այդ թաղանթն էլ պայթեց:

Եվ քամու պոռթկման պայմաններում, երբ արագությունը հասնում է վաթսուն հանգույցի (փոթորկից քիչ է տարբերվում), մեկ ակնթարթում ամբողջովին ցած է թափվում ողջ եռագույնը, ողջ առագաստը: Եվ առջեւա դիրքով փաթաթելն էլ անհնար է, քանի որ պայթել է հենց այդ փաթաթող ճոպանը: Առաջին բանը, որ պետք էր անել, հենց այն էր, ինչ արեց նավապետը: Սկսեց ճարպկորեն նավի ուղղությունը փոխել այնպես, որ ահռելի առագաստն իր լայն կուրծքը չպահի քամու հոսանքի առջեւ: Նույն պահին, ճոճվելով ու ցատկելով դեպի նավաքիթ նետվեցին Վահագնն ու Հայկը: Իսկ այդ ժամանակ առագաստի անկյունից դուրս պրծած ճոպանն անասելի ուժով զարկվում էր տախտակամածին: Ես կանգնած էի անմիջապես ընդհանուր նավասենյակի մուտքի մոտ, որը ծածկված է պաշտպանիչ տենտով, վրան՝ պոլիէթիլենային թափանցիկ թաղանթով պատված դիտապատուհանով: Ճոպանի հարվածն իջավ պատուհանի հենց կենտրոնին: Այն ճայթյունով ճաքեց: Մեծ առագաստն արդեն անհնար էր փաթաթել: Ստիպված էինք ուժեղ քամու տակ իջեցնել դա իր ահռելի քաշով՝ մոտ մեկ քառորդ տոննա: Բավական էր Սամվելին ղեկի մեկ անզգույշ, անճշգրիտ շարժում, որպեսզի... անհնար է պատկերացնել, թե ինչ կարող էր պատահել: Վերջապես հսկայական, ծանր եւ ներկի պատճառով ոչ փափուկ առագաստն սկսեց պոկումներով ցած իջնել, եւ արդեն երեւում էր, որ դրա մի մասն ընկնելու է օվկիանոսի եռուն մակերեսին: Բայց այդ ժամանակ այնտեղ արդեն պատրաստ կանգնած էին Բաբասն ու Մուշեղը: Իսկույն պարզ դարձավ, որ առագաստը կփրկվի:

Հիմա արդեն պետք էր այն նպատակահարմար կերպով ծալել-փաթաթել ահռելի պարկում տեղավորելու համար եւ առժամանակ մի կողմ դնել, մինչեւ կկարողանանք վերանորոգել: Սակայն դրոշ-առագաստի փրկությամբ հարցը բոլորովին էլ չլուծվեց: Ալիքների հոսանքը հանդիպակաց էր, քամին՝ հանդիպակաց: Պետք էր բացել սրբություն սրբոցը՝ գրոտը, որը ծխնիներով ամրացված է կայմին: Կանգառների ժամանակ այն փաթաթված է «սեփական առագաստով»: Որպես կանոն, երբ չի աշխատում, վրան երկար պարկ ենք հագցնում: Մեզ մոտ հենց միջակայմի ուղղությամբ նավի երկու կողմերում լատինատառ գրված է «Արմենիա»:

Ողջ անձնակազմով բավական արագ աշխատանքի նախապատրաստեցինք գրոտի ստորին առագաստակալը: Այս կախարդական առագաստն ունի ամբողջ երեք ռիֆ (սարք՝ պարան անցկացնելու համար), որը հնարավորություն է տալիս ուժեղ քամու ժամանակ փոքրացնել նրա մակերեսը: Նավապետը հրամայեց. «Արձակե՛լ ռիֆը»: Հրամանը կատարվեց: «Արմենիա»-ն սահուն ու փոքր անկյամբ թեքվեց աջ, բայց փոխարենը սկսեց առաջ շարժվել: Տասը րոպե անց բարձրացվեց նաեւ ստակսելը: Արագությունն ավելացավ երկու-երեք անգամ: Մուշեղը բարձր ձայնով հայտնեց. «Հինգուկես հանգույց»: Դա հսկայական արագություն է, եթե հաշվի առնենք, որ օվկիանոսն ու պասսատային քամին ամեն վայրկյան մեզնից գողանում են 6-8 հանգույց:

Այս ամենից հետո ես վերցրեցի հուշատետրս ու գրեցի. «Գրողը տանի, ասես ոչ մի բան էլ չի կատարվել: Ասես ամեն ինչ հենց այսպես էր»: Այ, շրջվեինք հետ ու վայելեինք 12-13 հանգույց արագությունը: Բայց հոսանքին հակառակ ենք գնում: Գնում ենք դանդաղ, փոխարենը՝ հաստատ: Մեզ սպասում են Չիլիում մեր հայրենակիցները: Ամեն օր էլեկտրոնային փոստով հարցնում են մեր գտնվելու վայրը: Եվ ամեն օր Արիկը նրանց հայտնում է մեր կետը երկրագնդի վրա:

Գլխավորն այն է, որ լողում ենք դեպի նպատակ:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**
**«Արմենիա» առագաստանավ,**
**Խաղաղ օվկիանոս**

# Էլ Բարադեյը ազդարարեց Եգիպտոսում «նոր դարաշրջանի սկիզբը»

*Մուբարաքը չի ուզում հեռանալ*

Եգիպտոսի բնակչությունը, ըստ երեւույթին՝ թունիսցիների հաջողությունից ոգեւորված, հունվարի 24-ից բողոքի բազմամարդ ելույթներով պահանջում է արդեն երեք տասնամյակ երկրում իշխող նախագահի Հոսնի Մուբարաքի հրաժարականը, ինչպես նաեւ արտակարգ դրության վերացում, ժողովրդավարության հաստատում եւ այլն: Կահիրեում ցուցարարները ջարդուփշուր են արել եւ հրկիզել են կառավարող կուսակցության կենտրոնակայանը, հաղորդում է RFI ռադիոկայանը:

Հունվարի 28-ի երեկոյան բնակչությանը դիմելով՝ նախագահ Մուբարաքը խոստացավ բարեփոխումներ կատարել եւ հայտարարեց կառավարության արձակման մասին, սակայն բնավ չանդրադարձավ իր պաշտոնաթողության հնարավորության հարցին:

Ընդդիմության առաջնորդներից մեկը՝ ՄԱԳԱՏԷ-ի նախկին ղեկավար, խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Մոհամմեդ Էլ Բարադեյը, կիրակի օրը Կահիրեի կենտրոնում՝ Թահրիր հրապարակում առաջին անգամ ելույթ ունեցավ ցուցարարների հոծ բազմության առջեւ: Իր ելույթում նա հռչակեց Եգիպտոսում «նոր դարաշրջանի» սկիզբը: «Մեր սկսածը անհնար է հետ շրջել», հայտարարեց Էլ Բարադեյը:

«Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստաալիքի կայքը հաղորդում է, որ ընդդիմադիր կազմակերպությունների կոալիցիան (որի մեջ մտնում է մասնավորապես «Մուսուլման եղբայրներ» արգելված շարժումը) Մոհամմեդ Էլ Բարադեյին պատվիրակ է ընտրել իշխանությունների հետ բանակցելու համար:

Իր հրապարակային ելույթից քիչ առաջ CNN-ին տված հարցազրույցում Էլ Բարադեյը նախագահ Մուբարաքին կոչ էր արել անհապաղ հրաժարական տալ: Նրա խոսքերով, Եգիպտոսը թեւակոխում է անցումային ժամանակաշրջան, որը պահանջում է ազգային միասնության կառավարության ստեղծում եւ ազատ ընտրությունների անցկացում:

CBS հեռուստաալիքին տված հարցազրույցում Էլ Բարադեյը ընդգծել է, որ Մուբարաքի պաշտոնաթողությունը թույլ կտա վերջ դնել զանգվածային հուզումներին եւ տեղ-տեղ նկատվող անկարգություններին: «Երեկ նրան կոչ էին անում հրաժարական տալ: Այսօր նրան դատի տալու կոչեր են հնչում», ավելացրել է ընդդիմության առաջնորդը:



Էլ Բարադեյը քննադատել է նաեւ ԱՄՆ-ի դիրքորոշումը, հայտարարելով, որ այդ երկրի վարչակազմի քաղաքականությունը հետզհետե անվստահելի է դառնում: Նրա խոսքերով, ԱՄՆ-ը բարբառում է ժողովրդավարության եւ մարդու իրավունքների մասին, միաժամանակ աջակցելով բռնատերին:

Մերձավոր Արեւելքում Եգիպտոսը ԱՄՆ-ի կարեւոր դաշնակիցն է: ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը կիրակի օրը իր ելույթում արտահայտվեց Եգիպտոսում իշխանության «կանոնակարգված փոխանցման» օգտին, սակայն Մուբարաքից չպահանջեց անհապաղ հրաժարական տալ:

Բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» թերթը պնդում է, թե Եգիպտոսում բողոքի ներկայիս ելույթները հրահրում է ԱՄՆ-ը: Թերթը պնդում է, թե վերջին երեք տարիներին ԱՄՆ իշխանությունները գաղտնի աջակցել են ներկայիս իրադարձությունների գլխավոր ակտիվիստներին ու կազմակերպիչներին, միեւնույն ժամանակ հրապարակավ պաշտպանելով Հոսնի Մուբարաքին եւ նրան անվանելով մերձավորարեւելյան գլխավոր դաշնակից: Այս պնդման համար թերթը վկայակոչում է 2008-ի դեկտեմբերին Կահիրեում ԱՄՆ դեսպան Մարգարետ Սկոբիի՝ Վաշինգտոն ուղարկած գաղտնի գրությունը, որով նա հայտնում է, որ եգիպտացի մի խումբ ակտիվիստներ արդեն մշակել են 2011-ի սեպտեմբերյան նախագահական ընտրություններից առաջ գործող վարչակարգի փոփոխման գաղտնի ծրագիր: Դեսպանն ավելացնում է, որ ակտիվիստներից մեկն արդեն եղել է ԱՄՆ-ում:

Չնայած այս պնդմանը, Մուբարաքի կառավարումը մինչեւ օրս ձեռնտու է եղել ինչպես ԱՄՆ-ին, այնպես էլ նրա գլխավոր դաշնակից Իսրայելին: Ուստի պետք է ենթադրել, որ վճռական խոսքն այնուամենայնիվ պատկանում է Եգիպտոսի ժողովրդին:

**Պ. Ք.**

ՀԱՄԱՌՕՏ ՔԱՅԼ

## Կիպրոսը եւս ճանաչեց Պաղեստինի պետությունը

**Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը նամակ է ստացել Կիպրոսի Հանրապետության նախագահ Դմիտրիս Քրիստոֆիասից: Վերջինս հայտնում է, որ իր երկիրը ճանաչում է Պաղեստինի պետությունը 1967-ի սահմաններով եւ Արեւելյան Երուսաղեմ մայրաքաղաքով:**

**Պաղեստինյան WAFA գործակալության կայքը նշում է, որ Քրիստոֆիասը կիպրա-պաղեստինյան պատմական կապերի մասին հիշեցնելուց հետո հույս է հայտնել, որ պաղեստինյան անկախ պետության ստեղծումը հիմք կդառնա Մերձավոր Արեւելքի խաղաղության համար:**

**Ավելի վաղ՝ հունվարի 25-ին Պերուի արտգործնախարար Խոսե Անտոնիո Գարսիա Բելաունդեն հայտարարել էր, որ Պերուն ճանաչում է առայժմ գոյություն չունեցող պաղեստինյան պետության անկախությունը: Պերուն նման հայտարարություն արած լատինաամերիկյան 8-րդ երկիրն է: Նրանից առաջ Պաղեստինի պետության անկախությունը ճանաչել էին Արգենտինան, Բոլիվիան, Բրազիլիան, Չիլին, Էկվադորը, Գայանան եւ Վենեսուելան:**

**Ուրուգվայի իշխանությունները հունվարի 13-ին հայտարարեցին, որ իրենք Պաղեստինի ճանաչման վերաբերյալ որոշում կընդունեն առաջիկա վեց ամսվա ընթացքում: Պաղեստինը ճանաչելու մասին առայժմ չի հայտարարել նաեւ Պարագվայի կառավարությունը:**

## Նազարբաեւը Ղազախստանում արտահերթ նախագահական ընտրություններ է առաջարկում

**Ղազախստանի Սահմանադրական խորհուրդը երեկ հակասահմանադրական է ճանաչել երկրի խորհրդարանի ավելի վաղ ընդունած որոշումը՝ նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի լիազորությունների ժամկետը երկարաձգելու հարցով հանրաքվե անցկացնելու մասին: Ընդգծելով, որ այդ որոշումը չի համապատասխանում Ղազախստանի հիմնական օրենքին, Սահմանադրական խորհրդի նախագահ Իգոր Ռոգովը նշել է. «Խնդրում եմ հաշվի առնել, որ այնուամենայնիվ, հանրապետության նախագահը, սահմանադրության համաձայն, կարող է մեկ ամսվա ընթացքում ներկայացնել իր առարկությունները՝ Սահմանադրական խորհրդի որոշման վերաբերյալ»:**

**Հիշեցնենք, որ Նազարբաեւի դիրքորոշումը հարցի վերաբերյալ, նախքան խորհրդարանի վերոհիշյալ որոշումը, արդեն իսկ պարզ էր: «Ժողովրդի հայր» կոչմանը նույն խորհրդարանի կողմից արժանացած նախագահը մերժում էր իր լիազորությունները երկարաձգելու նախաձեռնությունը, եւ այժմ անտրամաբանական կլինի, եթե Նազարբաեւը առարկություններ հայտնի Սահմանադրական խորհրդի որոշման կապակցությամբ:**

**Ավելին, երեկ ուղերձով դիմելով ղազախ ժողովրդին, Նազարբաեւն ասել է. «Այժմ մեր երկրի համար ժողովրդավարության փորձաշրջան է, եւ ես առաջարկում եմ անցկացնել նախագահական արտահերթ ընտրություններ»: Նշենք, որ Ղազախստանում նախագահական հերթական ընտրությունները նախատեսված են 2012-ին, ընդ որում՝ հաջորդ ընտրություններում հաղթած թեկնածուն կղեկավարի երկիրը արդեն 5 տարով՝ այժմյան 7 տարվա փոխարեն:**

**Հ. Ա.**

# «Թուրք դիվանագետներին ԱՍԱԼԱ-ի քողի տակ հանցագործ խմբի միջոցով «խորքային պետությունն» է սպանել»

*1-ին էջից*

***«Թունջայ Գյունեյը բացահայտեց արտգործնախարարության նահատակների սպանությունն իրականացնողներին, նշելով. «Թուրքիայում 1980 թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումից հետո գործի անցավ Չիկագոյում բույն դրած ընդհատակյա գլոբալ ցանցը: ԱՍԱԼԱ-ն, որ այս ցանցի հրաձիգն էր, Անկարայից ստացած հրահանգով սպանեց այն թուրք դիվանագետներին, որոնք հակադրվում էին աղտոտված պետական մեխանիզմին»:***

***Աշխարհի թերեւս ամենամութ ահաբեկչական կազմակերպություններից է... 1973-1995 թթ. բազում գործողություններ էր իրականացրել: ԱՍԱԼԱ կոչվող այս կազմակերպությունը 41 թուրք դիվանագետի սպանությամբ պատմության մեջ էր մտել: Սակայն «Էրգենեքոնի» «սեւ արկղ» Թունջայ Գյունեյը հիմնահատակ քանդում է ԱՍԱԼԱ-ին վերաբերող անգիր արված այս ոտանավորի շարադրությունը, նշելով ԱՍԱԼԱ-ի՝ թուրքական մութ ուժերի կողմից օգտագործման հանգամանքը, Գյունեյն այս անգամ ուշադրություն է հրավիրում «խորքային գլոբալ ցանցի» վրա: Ահա Գյունեյի ցնցող հետեւությունները.***

**- Ինչի՞ են թիրախ ընտրվել ԱՍԱԼԱ-ի միջոցով սպանված թուրք դիվանագետները:**

- PKK-ին ճանապարհ հարթելու համար: Ժամանակին այնպես ներկայացրին, թե իբր ԱՍԱԼԱ-ն սպառվել է: Սակայն այս կազմակերպությունը ներկայումս ակտիվ գործում է քաղաքական ասպարեզում եւ հայկական լոբբիների մաս է կազմում:

**- Այսինքն մեր դիվանագետները անտեղի զոհ են դարձել: Ինչո՞ւ թուրքական պետությունը հետամուտ չեղավ նրանց գործին:**

- Եթե դուք նայեք այն երկրների ներկայացրած զեկուցագրերին, որտեղ ծառայում էին սպանված դեսպանները, կտեսնեք, որ փաստերը խավարեցված են: Չի լուսաբանվել Անկարա ուղարկված գեթ մեկ զեկուցագիր, եթե նույնիսկ դա վերաբերում էր միջադեպի իրականացման վայրի ճշգրտման:

**- Ո՞րն էր մեր դիվանագետների մեղքը:**

- Բոլոր դիվանագետներն էլ հատուկ ընտրված էին: Սպանված դիվանագետները դեմ էին դուրս գալիս այն ժամանակ ձեռնարկվող ապօրինի գործերին: Զինվորական հեղաշրջումից (1980 թ. սեպտեմբերի 12-ին) մեկ տարի առաջ խորքային գլոբալ ցանցը կյանքի էր կոչել իր ծրագիրը: Մինչդեռ այս դիվանագետները հայտարարել էին, որ չեն կատարելու իրենցից պահանջվող առաջադրանքները: Կարճ ասած, դիվանագիտական առաքելության այս ղեկավարներին ոչնչացրել է Սուսուրլուքի բանդան:

**- Ի՞նչ է տվել նրանց սպանությունը հանցագործ խմբին:**

- Խորքային պետության համար խոչընդոտ հանդիսացող այս դիվանագետների ոչնչացումից հետո կենսագործունեության համար գործունեության վայրում աջակցություն է ցուցաբերվել ԱՍԱԼԱ-ին եւ Սուսուրլուքի հանցագործ խմբին, որ ապահովեն վերջիններիս հետագա գործողությունները: Տարածաշրջանում ստեղծվել էր ընդհատակյա միջազգային ցանց՝ կապված ԱՄՆ-ի, Իրանի, Իսրայելի, Թուրքիայի եւ Պակիստանի հետ: Այսպիսով, շրջանառության մեջ դրվեց 50-ամյա նոր ծրագիրը:

**- Ո՞րն է այդ մեծ ծրագրի էությունը:**

- Գործի դրվեց «պետական կառույցների աջակցությունը վայելող ընդհատակյա կազմակերպությունները ստեղծելու, դրանց տարբեր նպատակներով օգտագործելու, ապա եւ ոչնչացնելու» քաղաքականությունը: Այդ ծրագիրը «արդիականացված Թուրքիա» կարգախոսով կիրառվեց նարկոբիզնեսի եւ կեղտոտ փող-պետական մաֆիայի եւ նման ոլորտներում: Մասնավոր բանկերի փողերի լվացման գործողությունները, դրանում հետախուզական կառույցների դերը եւ այդ փողերի բաժանումը ահաբեկիչների եւ վերջիններիս աջակիցների մեջ, արդարացվեց:

**- Ինչպե՞ս կլուսաբանվի այս մութ խաղի հետնաբեմը:**

- Այս ամենը կարելի է լուսաբանել՝ ուսումնասիրելով այն գործընթացը, որն սկզբնավորվել է 1980-ի պետական հեղաշրջումից հետո մեր դիվանագետների սպանությամբ: Առ այսօր հայտնի չէ, թե ո՞րն էր սպանված դիվանագետների բուն պարտականությունը, որոնց սպանությունը ԱՍԱԼԱ-ի քողի տակ հրաձիգների միջոցով իրականացրին:

**- Դա կնշանակի, որ դեռեւս մեր տարածաշրջանում է խորքային գլոբալ ցանցը:**

- 1980-ին (հեղաշրջումից հետո) Թուրքիայում ստեղծվեց այնպիսի մի կծիկ, որը ներառում էր զենքի առեւտրականներին, փող լվացողներին, հետախուզական կառույցներին, դրածո իշխանություններին եւ համագործակիցներին: Կենտրոնակայանը Չիկագոյում գտնվող այս ցանցը ձգվում է մինչեւ Իրաք (Բաղդադ), Իրան (Թեհրան), Հնդկաստան (Մումբայ), Հորդանան, Բեյրութ, Թել Ավիվ եւ Ուկրաինա:

**- Ինչպե՞ս են կառավարում այս ցանցը՝ առանց իրազեկելու տվյալ երկրների կառավարություններին:**

- Նշված բոլոր երկրներում խորքային գլոբալ ցանցը գաղտնի գրասենյակներ ունի: Անկարայում էլ ուներ՝ Քըզըլայ թաղամասում, հավանաբար փոխադրվեց Բելգաթ:

**- Այս ամենի լույսի տակ ինչպե՞ս մեկնաբանել ԱՍԱԼԱ-ից հետո իսկույն PKK-ի շրջանառության մեջ դնելու փաստը:**

- Հարցին պատասխանելու համար պետք է նայել Չիկագոյի գլոբալ ցանցի հրամանով PKK-ի ծննդի համար թուրք դիվանագետների սպանության գործընթացից մինչեւ PKK-ի ամրապնդումն ընկած ժամանակահատվածը: PKK-ն պաշտոնապես ստեղծվել էր 1978-ի նոյեմբերի 27-ին: Մինչեւ 1984-ի օգոստոսի 15-ը որեւէ գործողություն չի իրականացրել: Այս ժամանակահատվածում կազմակերպությունը հարաբերություններ էր զարգացնում ազգային հետախուզական կառույցների հետ եւ կատարելագործում իր ծրագիրը: PKK-ն հենակետեր է տեղակայել այն երկրներում, որտեղ անխտիր գրասենյակներ ունի Չիկագոյի ցանցը:

**- Ո՞րն է այդ գործընթացում 1980 թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջման տեղը:**

- Նախքան հեղաշրջումը հանցավոր խմբերին մատակարարելու համար Թուրքիա զենք-զինամթերք էին մտցնում Բուլղարիայից: Հեղաշրջումից հետո բուլղարական դուռն իսկույն փակվեց: Գործի անցան նորաստեղծ խորքային գլոբալ ցանցի գրասենյակները: Այսպիսով, Թուրքիան սկսեց ծանոթանալ ՆԱՏՕ-ի պահեստներից գողացված զենքի եւ զինամթերքի հետ:

**- Այսինքն մեր դե՞մ են ուղղվում դաշնակիցների պահեստներից դուրս բերված զենքն ու զինամթերքը:**

- Թուրքիայում չբացահայտված գրեթե բոլոր սպանությունները իրականացվել են արեւմտյան երկրների կամ ԱՄՆ-ի արտադրած զենքով, եւ դա ապացուցված է: Հիմա արդեն այդ զինատեսակները, բացի մտավորականներից ու լրագրողներից, ուղղվում են նաեւ գործարարների դեմ»:

# Դուդուկը վստահելի ձեռքերի է փոխանցվում




Երբ անցյալ տարի Ռուսաստանի հայերի միության նախաձեռնությամբ հայաստանյան բոլոր մարզերի գրեթե բոլոր դպրոցներում անցկացվեց ռուսական երգի փառատոն, որն ավարտվեց Արամ Խաչատրյան համերգասրահում դափնեկիրների գալահամերգով, շատերն ասացին, որ Հայաստանում ռուսական երգի փառատոնը ազգային հիմք չունի, այն մղում է հայ աշակերտին դեպի օտար մշակույթ: Սակայն փառատոնին ներկա գտնվողները դժվար թե այդպիսի տպավորություն ստանային. բացի նրանից, որ ռուսերենը մեզանում այնքան էլ չի համարվում օտար լեզու, բացի նրանից, որ շատերի համար ռուսական երգը գրեթե նույնքան հարազատ է, որքան ազգայինը, մասնակից երեխաները նաեւ կատարում էին հայկական երգեր ռուսերեն լեզվով, ինչն արդեն հայ-ռուսական բարեկամության խորհուրդն ուներ:

Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի հերթական նախաձեռնության վերաբերյալ արդեն միանշանակ կարելի է ասել, որ հիմքն ազգային է. անցյալ տարի ՌՀՄ եւ ՀՀԿ նախագահ **Արա Աբրահամյանի** անձնական նախաձեռնությամբ Հայաստանում անցկացվեց դուդուկահարների մրցույթ՝ երկու տարիքային խմբով, որը անցյալ տարի 10-ամյակը բոլորած Ռուսաստանի հայերի միության հոբելյանական շարքի վերջին միջոցառումն էր: Մրցույթը, որը կազմակերպիչները ցանկանում են ամենամյա, անգամ միջազգային դարձնել, անվանվեց դուդուկի աշխարհահռչակ վարպետ Ջիվան Գասպարյանի անունով:

Ինչպես ավելի վաղ տեղեկացրել էր «**Ազգը**», դուդուկահարների մրցույթին մասնակցելու հայտ էին ներկայացրել մինչեւ 17 եւ 17-30 տարեկան երիտասարդներ: Կազմակերպիչները, որոնց միացել էին նաեւ մշակույթի, սփյուռքի նախարարությունները, ինչպես նաեւ Հայաստանի երաժշտական ընկերությունը, հաղթողների համար սահմանել էին ոսկե, արծաթե մեդալներ, ինչպես նաեւ դրամական պարգեւներ: «Մրցույթի նպատակն է նպաստել երիտասարդ դուդուկահարների կատարողական վարպետության բարձրացմանը, դուդուկին առնչվող ազգային երաժշտական լավագույն ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը», ընդգծեց ՌՀՄ եւ ՀՀԿ փոխնախագահ **Վլադիմիր Աղայանը**:

Հունվարի 29-ին Արամ Խաչատրյան համերգասրահում մրցույթի հաղթողները ՌՀՄ եւ ՀՀԿ փոխնախագահներից եւ Ջիվան Գասպարյանից ստացան իրենց պարգեւները. մինչեւ 17 տարեկանների խմբում հաղթող էր ճանաչվել **Արտյոմ Բաղալյանը**, իսկ 17-30-տարիքային խմբում՝ կրտսեր **Ջիվան Գասպարյանը**: «Թող տպավորություն չստեղծվի, թե թոռս իմ անվան մրցույթում հաղթող է ճանաչվում: Այսօր դուք կզգաք նրա վարպետությունը», ասաց ավագ **Ջիվան Գասպարյանը**: Իսկ հանդիսատեսը շուրջ երկու ժամ տեւած համերգում ոչ միայն զգաց մրցույթի հաղթողի վարպետությունը, այլեւ հայկական դուդուկի դպրոցի վաղվա՝ փայլուն օրը: Անգամ Ջիվան Գասպարյանը համերգի վերջում խոստովանեց. «Ես անչափ երջանիկ եմ այսօր»:

Ազգային նշանակություն ունեցող նախաձեռնության կազմակերպիչները հաստատապես հասան իրենց նպատակին, եւ սրա ապացույցը ոչ միայն 12 տաղանդավոր երիտասարդ դուդուկահարների բացահայտումն է, ոչ միայն Խաչատրյան համերգասրահի հանդիսատեսի հիացմունքը, այլեւ ու թերեւս ամենակարեւորը՝ վեցամյա Նարեկի խոսքերը, որ նա ասաց մորը համերգից հետո, դահլիճից դուրս գալիս. «Մամ, ինձ կտանե՞ս դուդուկի, ես ուզում եմ դուդուկ նվագել»:

Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի ազգային հիմք ունեցող նախաձեռնություններն ու ծրագրերը շարունակվում են. շուտով կիրառարկվեն 2011-ի մրցանակաբաշխության անվանակարգերն ու կանոնները, որը ՌՀՄ եւ ՀՀԿ իրականացնում են Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի, Գրողների, Նկարիչների, Կոմպոզիտորների եւ Ժուռնալիստների միությունների հետ մի նպատակով՝ աշխուժացնել երկրի գիտական ու ստեղծագործական կյանքը:

**Հ. Ա.**

# Համարձակ եւ աշխատասեր

*Արտյոմ Աբրահամյանի ելույթը Հայֆիլհարմոնիայում*



Հունվարի 28-ին Արամ Խաչատրյան համերգասրահում Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի մասնակցությամբ դասական երաժշտության երեկոյի առաջին մասը նվիրված էր Պրոկոֆեւի 120-ամյակին:

Բազմաթիվ երաժշտասերների ու երաժշտագետների հետաքրքրել ու զարմացրել էր, որ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանող **Արտյոմ Աբրահամյանը** կատարելու է Ս. Պրոկոֆեւի դաշնամուրի թիվ 1 կոնցերտը:

Երիտասարդ դաշնակահարի ցանկությունը՝ առաջին համերգի ժամանակ նվագել Պրոկոֆեւ, զարմացրել է Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար **Էդուարդ Թոփչյանին**: Ստեղծագործությունը բարդ է եւ երիտասարդ տարիքում սակավաթիվ դաշնակահարներ կարող են մեկնաբանել: Անհրաժեշտ է ոչ միայն շնորհք, այլեւ համարձակություն եւ մեծ պատասխանատվություն: Սակայն երիտասարդին լսելուց հետո Թոփչյանը խոստովանում է, որ ապշել է ու հավելել. «Համարձակություն է անհրաժեշտ դասական երաժշտության գլուխգործոցներից մեկը մեկնաբանելու համար, Արտյոմն այդ համարձակությունն ունի: Վստահ եմ, որ կատարումը կարժանանա բարձր գնահատականի»:

Դաշնակահարի պրոֆեսոր՝ անվանի մանկավարժ **Վիլլի Սարգսյանի** մեկնաբանությամբ էլ Արտյոմը ոչ միայն համարձակ, այլեւ շատ տաղանդավոր դաշնակահար է:

Օրվա հերոսի առաջին ուսուցչուհի **Ելենա Քրաջյանն** էլ համոզված է՝ երիտասարդ դաշնակահարին մեծ ապագա է սպասում, որովհետեւ նա ունի հրաշալի լսողություն, սիրում է արվեստը եւ շատ աշխատասեր է:

**Հ. Հ.**

# Ագապի Մկրտչյանը՝ 6 կին հեղինակների ժողովածուում

Ֆրանկֆուրտի Օտարերկրացիների հետ բարեկամության գերմանական շրջանակը գրական ցերեկույթ է կազմակերպել երիտասարդական մշակութային կենտրոնում, որի նպատակն էր ներկայացնել տարբեր երկրներից Գերմանիայում բնակություն հաստատած 6 կին հեղինակների: Հայաստանը ներկայացրել է Ագապի Մկրտչյանը: Ինչպես իրազեկ ենք դառնում հունվարի 24-ի «Ֆրանկֆուրտեր նոյե պրեսսե»-ից, Ֆրանկֆուրտի գրական ակումբին անդամակցող գրողները նախ հետաքրքրական պատմություններ են պատմել իրենց հայրենիքների՝ Խորվաթիայի, Իրանի, Չեխիայի, Ֆինլանդիայի, Հայաստանի մասին, այնուհետեւ ներկայացրել Գերմանիայից իրենց առաջին տպավորությունները: Գրասեր լսարանի դատին է հանձնվել «Brandes եւ Apsel» հրատարակչության լույս ընծայած «Wortwandlerinnen» վերնագրով ժողովածուն, որում ամփոփված են 6 հեղինակների ստեղծագործությունները: Ագապի Մկրտչյանի «Սեւ դեմքը» նույնպես տեղ է գտել այդ ժողովածուի մեջ:

**Ան. Հ.**
**Գերմանիա**

**Ի ՀՈՒՇ**

# Համբարձում Սահակյան



Կյանքից անժամանակ հեռացավ շնորհաշատ ասմունքող եւ դերասան **Համբարձում Սահակյանը**: Դա մեծ վիշտ էր ոչ միայն նրա հարազատների ու ընկերների, այլեւ բոլոր նրանց համար, ովքեր ճանաչում էին Համբարձումին, առնչվել էին նրա արվեստի հետ: Հ. Սահակյանը ծնվել է երկու նշանավոր արվեստագետների ընտանիքում: Հայրը՝ Վաղարշակ Սահակյանն էր, Սայաթ-Նովայի եւ Ջիվանու երգերի անզուգական կատարողը, աշուղական երգի անսամբլի հիմնադիրը: Համբարձումի մայրը՝ Սիրվարդ Մեսրոպյանն էր, որն իր սերնդի լավագույն ասմունքողներից մեկն էր, արեւմտահայ եւ արեւելահայ պոեզիայի հրաշալի մեկնաբանը, ժամանակին Հովհաննես Շիրազի դեռեւս անտիպ «Հայոց դանթեական»-ի բեմական կյանք եւ շունչ տվողը: Սիրվարդ Մեսրոպյանը նաեւ բեմական խոսք առարկա էր դասավանդում Գեղարվեստաթատերական ինստիտուտում:

Համբարձումը դեռ էն գլխից ծնողներից ժառանգել էր թե՛ տպավորիչ բեմական ձայն, եւ թե՛ արտիստական ինտուիցիա: Օժտված էր գեղարվեստական խոսքի մոգական եւ ազդեցիկ մատուցման բնածին շնորհով: Հանգամանքների երջանիկ դասավորությամբ Սիրվարդ Մեսրոպյանի որդին եւ աշակերտը բախտ ունեցավ լինելու նաեւ բեմական խոսք առարկայի հիանալի մասնագետ, Էլիզա Գյուլիսերյանի սանը, եւ անցնելով ուսումնառության կրկնակի դպրոց դեռ ուսանողական տարիներին ազդարարեց իր մասին որպես ապագա տաղանդավոր ասմունքողի:

Տակավին երրորդ կուրսի ուսանող Համբարձում Սահակյանը մասնակցեց Յախոնտովի անվան ասմունքի լենինգրադյան փառատոն-մրցույթին, եւ Երեւան վերադարձավ պատվավոր մրցանակով: Մենք, նրա համակուրսեցիներս, հանդիսատեսի ոգեւորությամբ էինք ծափահարում բեմական խոսք առարկայի կուրսային քննություններին, Համբարձումի պատրաստած եւ ներկայացրած ծրագրերին: Նա կարծես արդեն ուսանող չէր, այլ պրոֆեսիոնալ ասմունքող-արտիստ:

1980-ին, ավարտելով Գեղարվեստաթատերական ինստիտուտը որպես դերասան, աշխատել է երիտասարդական փորձարարական (փոքր) թատրոնում, խաղացել է հեռուստաթատրոնում որպես ասմունքող, եղել Հայպետֆիլհարմոնիայի մենակատար: Միջին եւ ավագ սերնդի հեռուստադիտողը դեռեւս հիշում է 1980-ական թվականներին Հանրային հեռուստատեսությամբ նրա եւ քրոջ, նույնպես հիանալի ասմունքող՝ Նունե Սահակյանի մասնակցությամբ «Պոեզիայի ժամ» հաղորդաշարը: Ցավոք, 1990-ական թվականներին հայտնի պատճառներով, սոցիալական դժվարությունների եւ արվեստի ժամանակավոր տեղատվության հետեւանքով, շատերի պես Համբարձումը եւս հայտնվեց արտերկրում: Սակայն, այստեղ էլ նա հավատարիմ մնաց կենդանի խոսքի մատուցման իր կոչմանը: Մշտապես ելույթներ ունենալով հայ գաղթօջախներում, Համբարձումը իրեղեն խոսքի, վեհ խոսքի ուժով ոգեւորում էր մեր հայրենակիցներին, նպաստում հայապահպանության կարեւոր գործին: Սակայն օտարությունը Համբարձումի համար չէր, նա բազմաթիվ թելերով կապված էր հայրենիքի հետ: Հաճախ վերադառնում էր, ձգտում գտնել իր տեղը, շարունակել տարիներ առաջ իր սկսածը, ծառայել հայրենի հանդիսատեսին: Որպես ասմունքող արդյունավետ էր նրա համագործակցությունը վաստակավոր կոլեկտիվ Սայաթ-Նովա աշուղական երգի անսամբլի հետ, որի գեղարվեստական ղեկավարն էր ՀՀ վաստակավոր արտիստ Թովմաս Պողոսյանը: Ի դեպ, վերջինս Համբարձումի հոր՝ Վաղարշակ Սահակյանի, տաղանդավոր սանն է եւ նրա գործի արժանավոր շարունակողը: Որպես ասմունքող, մի շատ թանկ ու անգնահատելի հատկություն ուներ Համբարձումը, հարազատ մնալով իր արտիստական խառնվածքին: Միաժամանակ տարբեր հեղինակներին նա ներկայացնում էր տարբեր արտահայտչաձեւերով: Նրա մատուցմամբ Չարենցը, Սեւակը կամ Համո Սահյանը ե՛ւ ինքնատիպ էին, ե՛ւ ասմունքողի ընդհանուր ոճին հարազատ: Համբարձումը կապող օղակ էր հեղինակի եւ հանդիսատեսի միջեւ, գրական գործով վարակում էր հանդիսատեսին, տեղափոխում նրան տվյալ հեղինակի բանաստեղծական աշխարհը: Իսկ Վիլյամ Սարոյանի պատմվածքների նրա կատարումները անգերազանցելի էին մեզանում: Սա բնավ չափազանցություն չէ, ովքեր լսել են նրա սարոյանական արձակի մեկնաբանությունը բեմից, կհաստատեն այս խոսքերը: Մեր սիրելի Համբարձումը կյանքից հեռացավ արվեստագետի համար հասուն, ծաղկուն տարիքում: Նա դեռ շատ անելիքներ ուներ, դեռ ինչքան հոգեւոր վայելքի հրաշալի պահեր կարող էր նա պարգեւել մեր հանդիսատեսին: Մեր այս դժվարին նյութապաշտ ժամանակներում որքան անհրաժեշտ էր նրա ռոմանտիկ ոգեղեն արվեստը եւ ինչեր կարող էր նա փոխանցել իր արվեստակից երիտասարդ սերնդին որպես արհեստավարժ ասմունքող, եթե դասավանդելու հնարավորություն ունենար մեր արվեստի բուհերում:

Ցավոք, անկատար մնացին Համբարձումի ծրագրերն ու իղձերը, դա միայն նրա կորուստը չէ, այլ մեր բոլորի, որ բախտ ենք ունեցել հաղորդակցվելու նրա արվեստին եւ հատկապես նրանց, ովքեր նման հնարավորություն չունեցան...

**ԱՐՎԵՍՏԱԿԻՑ ԸՆԿԵՐՆԵՐ,**
**ՀԱՄԱԿՈՒՐՍԵՑԻՆԵՐ**

# «Արտույտների ագարակը»՝ հեղինակային ընթերցմամբ

Հյուսիսգերմանական Քիլ քաղաքի գրականության տանը Անտոնիա Արսլանը հունվարի 27-ին եւ 28-ին ներկայացրել է իր «Արտույտների ագարակը» գիրքը՝ իտալերեն եւ գերմաներեն լեզուներով: Էլեկտրոնային տեղեկատվության մեջ համառոտ անդրադարձ կա ինչպես Պադուայում բնակվող հայազգի Արսլանի կենսագրությանը, այնպես էլ վեպի դիպաշարին: Գրքի իտալերեն հրատարակությունը բուռն հետաքրքրություն է առաջացրել ինչպես քննադատների, այնպես էլ ընթերցողների շրջանում՝ ամիսներ շարունակ գլխավորելով բեսթսելլերների ցուցակը: «Արտույտների ագարակը» վեպն արժանացել է Campiello, իտալական P.E.N. ակումբի, ինչպես նաեւ Manzoni մրցանակներին: Վեպն էկրանավորել են Տավիանի եղբայրները:

Միջոցառումը կազմակերպել են գրականության տունը՝ «Դանթե Ալիգերի» ընկերակցության հետ համատեղ:

**Ան. Հ.**
**Գերմանիա**

ԱԶԳ Մարզական

# Ռոբերտ Արզումանյանը կարիերան կշարունակի Լեհաստանում




Հայաստանի հավաքականի պաշտպան Ռոբերտ Արզումանյանը նոր մրցաշրջանում հանդես կգա Լեհաստանում: Բայց ոչ «Սլյոնսկում», որի կազմում հաջող փորձաշրջան էր անցել, այլ Լեհաստանի առաջնության առաջատար Բելոստոկի «Յագելոնիայում»: Ռոբերտն ակումբի հետ 3,5 տարվա պայմանագիր է կնքել: Արզումանյանը «Յագելոնիայում» հանդես կգա 25 համարի մարզաշապիկով: Նա թիմի հետ ուսումնամարզական հավաքի է մեկնել Անթալիա:

Ռոբերտ Արզումանյանը «Փյունիկի» մարզադպրոցի սան է: «Փյունիկում» նա նորամուտը նշել է 2003-ին: Մինչեւ 2007-ը ներառյալ նա «Փյունիկում» 5 անգամ նվաճել է Հայաստանի չեմպիոնի տիտղոսը, առաջնությունում անցկացրել է 87 խաղ, խփել 6 գնդակ: 47 անգամ Արզումանյանը հանդես է եկել Հայաստանի ազգային հավաքականում: 2008-ին Ռոբերտը տեղափոխվեց դանիական «Ռանդերս», սակայն թիմի կազմում ամրապնդվել նրան այդպես էլ չհաջողվեց:

Եվ ահա վերջապես Արզումանյանը նոր թիմ գտավ: «Յագելոնիան» անցած մրցաշրջանում 16 թիմերի մրցավեճում զբաղեցրել է 6-րդ տեղը, նվաճել է երկրի գավաթն ու Սուպերգավաթը: Ընթացիկ մրցաշրջանում թիմը շատ հաջող է հանդես գալիս եւ առաջին շրջանից հետո 30 միավորով վստահորեն գլխավորում է աղյուսակը՝ 3 միավորով առաջ անցնելով «Լեգիայից» ու «Վիսլայից»: Թիմը շատ հաջող է խաղացել հատկապես սեփական հարկի տակ՝ հաղթելով բոլոր 7 խաղերում էլ գնդակների 17-4 տարբերությամբ: Հյուրընկալվելիս 8 հանդիպումներում «Յագելոնիան» տոնել է 2 հաղթանակ, 3-ական ոչ-ոքի ու պարտություն է գրանցել իր օգտին: «Յագելոնիան» Լեհաստանի հնագույն ակումբներից է, հիմնվել է 1920-ին:

## «Արարատն» անուշադրության է մատնված

Հանրապետության ֆուտբոլի երբեմնի առաջատար Երեւանի «Արարատն» իր արտերկրի հովանավորների արժանի ուշադրությանը չի արժանանում: Ի տարբերություն առաջնության մասնակից մյուս ակումբների, մինչ օրս «Արարատը» դեռեւս ուսումնամարզական հավաք չի անցկացրել, քանի որ անհրաժեշտ գումարը հովանավորները չեն հատկացրել: Թիմի մարզչական կազմը նախատեսել էր առաջին հավաքն անցկացնել Ծաղկաձորում, որն այդպես էլ չկայացավ:

«Արարատը» շարունակում է մարզվել Ջրաղբյուրում: Թիմի համալրման գործընթացն էլ ինչպես հարկն է չի ընթանում: «Արարատի» գլխավոր մարզիչ Տիգրան Եսայանն էլ գտնում է, որ նման կազմով թիմն ի վիճակի չի լինի առաջնությունում բարձր արդյունքների հասնել: «Գանձասարի» հետ կայացած ստուգողական խաղն էլ ասվածի վառ վկայությունն է: Արարատցիները 0-6 հաշվով ջախջախիչ պարտություն կրեցին: Կազմանցիներից աչքի ընկան Վլադիմիր Մարիչը, Անդրանիկ Սարգսյանը, Բենիամին Մանուչարյանը, Արսեն Ավետիսյանը, Սարգիս Մովսիսյանն ու Վրույր Գրիգորյանը:

Ինչ վերաբերում է «Գանձասարին», ապա թիմը զգալի համալրում է ստացել: Փորձարկվում են նաեւ օտարերկրացի ֆուտբոլիստներ, որոնցից սերբ խաղացողներ Վլադիմիր Մարիչի եւ Գորան Օբրադովիչի հետ շուտով պայմանագիր կկնքվի: «Գանձասարը» փետրվարի 6-ին կմեկնի Անթալիա, որտեղից էլ հետագայում կուղեւորվի Աշգաբադ՝ մասնակցելու «Թուրքմենբաշու գավաթի» խաղարկությանը:

## Լեւոն Հայրապետյանն էլ կխաղա Լեհաստանում

**Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականի կիսապաշտպան Լեւոն Հայրապետյանը 6 ամսով պայմանագիր է կնքել լեհական «Լեհիա» ակումբի հետ, որում փորձաշրջան էր անցնում: Եթե Հայրապետյանին հաջողվի իրեն լավ դրսեւորել թիմում, ապա նրա պայմանագրի ժամկետը կերկարաձգվի 3 տարով: Անցած մրցաշրջանի կեսերից Լեւոնը հանդես եկավ «Փյունիկում», իսկ մինչ այդ 2 տարի խաղում էր գերմանական «Համբուրգի» 2-րդ թիմում:**

**«Լեհիան» նախորդ առաջնությունում զբաղեցրել է 7-րդ տեղը: Ընթացիկ մրցաշրջանի առաջին շրջանից հետո թիմը 23 միավորով 5-րդ տեղում է:**

## «Ուլիսը» պարտվեց խոշոր հաշվով

Ուռեկիում մարզումներն է շարունակում «Ուլիսը»: Սեւադա Արզումանյանի սաները ստուգողական հերթական խաղում 0-3 հաշվով զիջեցին Վրաստանի բարձրագույն խմբի առաջնությունում հանդես եկող «Բայային»: Վերջին հանդիպումն «Ուլիսը» կանցկացնի փետրվարի 1-ին «Սիոնիի» հետ ու կվերադառնա Երեւան:

## «Մեծ սաղավարտի» դափնեկիրները հայտնի են




*Կիմ Կլիյստերսն ընտանյոք հանդերձ*

**Վերջնագիծը հատեց թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունը, որը «Մեծ սաղավարտ» մրցանակի շարքի ընթացիկ մրցաշրջանի առաջին մրցաշարն էր:**

**Տղամարդկանց մենախաղի հաղթող դարձավ սերբ Նովակ Ջոկովիչը, որը եզրափակիչում առավելության հասավ բրիտանացի Էնդի Մարեյի նկատմամբ (6-4, 6-2, 6-3): Ջոկովիչը 2-րդ անգամ հաջողության հասավ Մելբուռնում: Առաջին հաղթանակը նա տոնել էր 2008-ին:**

**Իսկ ահա բելգիացի Կիմ Կլիյստերսին առաջին անգամ հաջողվեց դառնալ Ավստրալիայի բաց առաջնության հաղթող: Նա եզրափակիչում պարտության մատնեց չինացի թենիսիստուհի Լի Նային (3-6, 6-3, 6-3), որը մրցաշարի հայտնությունն էր: Եզրափակիչ խաղից առաջ Կլիյստերսը հայտարարել էր, որ այս մրցաշրջանը վերջինն է լինելու մարզական կարիերայում:**

**Կանանց զուգախաղում հաջողությունն ուղեկցեց արգենտինացի Գիզելա Դուլկոյին եւ իտալացի Ֆլավիա Պենետային, որոնք վճռորոշ խաղում առավելության հասան ռուսաստանցի Մարիա Կիրիլենկոյի եւ բելառուս Վիկտորիա Ազարենկոյի նկատմամբ (2-6, 7-5, 6-1): Տղամարդկանց զուգախաղում ուժեղագույնը Բոբ եւ Մայք Բրայան եղբայրներն են, որոնք հաղթեցին հնդիկ թենիսիստ Մահեշ Բհուպաթիին եւ Լեանդր Պաեսին (6-3, 6-4): Խառը զուգախաղում չեմպիոնի տիտղոսը նվաճեց Կատերինա Սրեբոտնիկ-Դանիել Նեստոր զույգը, որը հաղթեց Յունյան Ջան-Պոլ Հենլի երկյակին:**

## «Բանանցն» ավարտեց հավաքը

«Բանանցի» ֆուտբոլիստներն ավարտեցին ուսումնամարզական հավաքը Թուրքիայում: Ստուգողական վերջին խաղում «Բանանցը» ոչ-ոքի (1-1) խաղաց «Կայրաթի» հետ: «Բանանցից» գոլի հեղինակը Վալտեր Պողոսյանն էր: Փետրվարի 10-20-ը «Բանանցը» եւս մեկ ուսումնամարզական հավաք կանցկացնի Իսպանիայում:

## Ղազարյանի հաղթական գոլը

Սոչիում «Փյունիկը» ստուգողական հերթական խաղն անցկացրեց տեղի «Ժեմչուժինա-Սոչիի» հետ: Գեւորգ Ղազարյանի խփած գնդակը հաղթանակ պարգեւեց փյունիկցիներին:

## Վարուժան Հակոբյանը միջին դիրքերում է

Ջիբրալթարի շախմատի մրցաշարում Վարուժան Հակոբյանը 6 տուրից հետո վաստակած 4 միավորով 150 մասնակիցների մեջ զբաղեցնում է 26-րդ հորիզոնականը: Նա հաղթել է Իսմայիլ Քարիմին, Ռամ Սոֆերին եւ Մելիս Կաներին, հաշտություն է կնքել Վիկտոր Կորչնոյի եւ Իրինա Կրաշի հետ: Միակ պարտությունը Հակոբյանը կրել է 6-րդ տուրում Վիկտոր Միխալեւսկուց:

5,5 միավորով առաջատարը Վասիլի Իվանչուկն է: Նրան կես միավոր են զիջում Նայջլ Շորթը, Դանիել Ֆրիդմանը եւ Վիկտոր Միխալեւսկին:

ՇԱԽՄԱՏ

## Արոնյանը 3-րդն է, Սարգսյանը՝ 5-րդը

**Իրենց մրցավեճն ավարտեցին Վեյք Ան Զեեի շախմատի մրցաշարի մասնակիցները: Լեւոն Արոնյանն ավարտական 3 տուրերում հաշտություն կնքելով Ռուսլան Պոնոմարյովի, Էրվին Լ'Ամիի եւ Յան Սմիթսի հետ, վաստակած 8 միավորով 3-4-րդ տեղերը բաժանեց Մագնուս Կառլսենի հետ:**

**Շատերի համար անսպասելի, մրցաշարի հաղթող դարձավ ճապոնացի գրոսմայստեր Հիկարու Նակամուրան: Նա շատ բարձր արդյունք ցույց տվեց՝ 13 հնարավորից վաստակելով 9 միավոր: Վերջին անգամ Վեյք Ան Զեեում նման արդյունքի էին հասել Անանդն ու Թոփալովը 2006-ին: Իսկ ռեկորդային ցուցանիշը պատկանում է Գարի Կասպարովին, որը 1999-ին 10 միավոր էր վաստակել:**

**Հիկարու Նակամուրան ծնվել է 1987-ին Ճապոնիայում: Նրա հայրը ճապոնացի է, մայրը՝ ամերիկուհի: 1989-ին նրանց ընտանիքը տեղափոխվել է ԱՄՆ: 10 տարեկանում նա դարձավ ամենաերիտասարդ վարպետն ԱՄՆ-ում, իսկ 5 տարի անց գերազանցեց Ռոբերտ Ֆիշերի ռեկորդը՝ դառնալով ամենաերիտասարդ գրոսմայստերն ԱՄՆ-ում:**

**8 միավորով 2-րդ տեղը գրավեց Վիշվանաթան Անանդը: Հաջորդ տեղերում են Մաքսիմ Վաշիե-Լագրավը, Վլադիմիր Կրամնիկը՝ 7,5-ական, Ռուսլան Պոնոմարյովն ու Անիշ Գիրին՝ 6,5-ական, Յան Նեպոմնյաչչին ու Վան Հաոն՝ 6-ական, Էրվին Լ'Ամին, Յան Սմիթսը եւ Ալեքսանդր Գրիշչուկը՝ 4,5-ական, Ալեքսեյ Շիրովը՝ 4:**

**B խմբի մրցաշարի մասնակից Գաբրիել Սարգսյանը 7,5 միավորով գրավեց 5-րդ տեղը: Ավարտական 3 տուրերում Սարգսյանը հաշտություն կնքեց Ֆրեսինեի, Համերի եւ Եֆիմենկոյի հետ: 8,5 միավորով հաղթող ճանաչվեցին Լյուկ Մակշեյնն ու Դավիթ Նավարան:**

## Նոր չեմպիոնը Ռոբերտ Հովհաննիսյանն է



**Ինչպես սպասվում էր, 20-ամյա Ռոբերտ Հովհաննիսյանն առաջին անգամ նվաճեց Հայաստանի շախմատի չեմպիոնի տիտղոսը: 10-րդ տուրում հաղթելով Արա Մինասյանին, Ռոբերտը պահպանեց մոտակա հետապնդողներից մեկ միավորի առավելությունը: Այնպես որ ավարտական տուրում Արտաշես Մինասյանի հետ մրցավեճում Ռոբերտին բավարարում էր նույնիսկ ոչ-ոքին: Նա իր երկրպագուներին երկար սպասեցնել չտվեց: Կատարելով ընդամենը 11 քայլ, Հովհաննիսյանն արագորեն հաշտություն կնքեց մրցակցի հետ ու առաջին շնորհավորանքներն ընդունեց:**

**Ռոբերտ Հովհաննիսյանն իրոք արժանիորեն նվաճեց հանրապետության չեմպիոնի տիտղոսը՝ իրավունք ստանալով հանդես գալու Հայաստանի հավաքականում: Ռոբերտը 11 հնարավորից վաստակեց 8 միավոր: Նա տարավ 6 հաղթանակ, 4 պարտիա ավարտեց ոչ-ոքի եւ միակ պարտությունը կրեց հանրապետության անցյալ տարվա չեմպիոն Ավետիք Գրիգորյանից: Ռոբերտը կպարգեւատրվի 1,2 մլն դրամով:**

**Համառ պայքար էր ծավալվել մրցանակային 2-րդ եւ 3-րդ տեղերի համար: Ի վերջո, 3 շախմատիստներ վաստակեցին հավասար՝ 7-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով արծաթե մրցանակակիր դարձավ Սամվել Տեր-Սահակյանը, որը վերջին 2 տուրերում հաշտություն կնքեց Հրանտ Մելքումյանի հետ ու հաղթեց Տիգրան Պետրոսյանին: Բրոնզե մեդալը կհանձնվի Զավեն Անդրեասյանին, որը պարտության մատնեց Աշոտ Անաստասյանին եւ ոչ-ոքի խաղաց Դավիթ Պետրոսյանի հետ: 7 միավորով 4-րդ տեղը գրավեց Արման Փաշիկյանը:**

**Մյուս մասնակիցների արդյունքներն այսպիսին են. Ավետիք Գրիգորյան՝ 6,5, Տիգրան Պետրոսյան՝ 6, Արտաշես Մինասյան, Հրանտ Մելքումյան՝ 5-ական, Արա Մինասյան՝ 4, Աշոտ Անաստասյան, Դավիթ Պետրոսյան՝ 3,5-ական միավոր:**

**Այսօր, ժամը 16-ին Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տանը տեղի կունենա մրցանակակիրների պարգեւատրման արարողությունը, որին ներկա կգտնվի հանրապետության նախագահ, շախմատի ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյանը:**

## Արագ շախմատում ուժեղագույնը Տիգրան Պետրոսյանն է

**Շախմատի Հայաստանի տղամարդկանց բարձրագույն խմբի 71-րդ առաջնության ավարտից հետո կայացավ հանրապետության արագ շախմատի մրցաշարը, որին մասնակցեցին 27 շախմատիստներ: Առաջնության 12 մասնակիցներից մրցաշարին մասնակցեցին Տիգրան Պետրոսյանը, Հրանտ Մելքումյանը, Սամվել Տեր-Սահակյանը եւ Տիգրան Քոթանջյանը: Մասնակիցների թվում էին նաեւ Լիլիթ Մկրտչյանը, հանրապետության այս տարվա չեմպիոնուհի Սիրանուշ Անդրեասյանը, անվանի վետերան, միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանը:**

**8 տուրով անցկացված մրցաշարի հաղթող դարձավ գրոսմայստեր Տիգրան Պետրոսյանը, որը վաստակեց 6,5 միավոր: Նա հաղթեց Էդուարդ Մնացականյանին, Սարգիս Մանուկյանին, Մհեր Գասպարյանին, Լեւոն Բաբուջյանին, Հրանտ Մելքումյանին եւ Արման Հայրապետյանին, հաշտություն կնքեց Արսեն Եղիազարյանի հետ: Միակ պարտությունը 2-րդ տուրում Պետրոսյանը կրեց Հայկ Վարդանյանից: Վերջինս 6 միավորով գրավեց 3-րդ տեղը՝ գործակիցներով 2-րդ տեղը զիջելով Հրանտ Մելքումյանին: 6 միավոր վաստակած Սամվել Տեր-Սահակյանը գրավեց 4-րդ տեղը: Լիլիթ Մկրտչյանը 4,5 միավորով 11-րդն էր, Սիրանուշ Անդրեասյանը 4 միավորով՝ 16-րդը: 4 միավորով 14-րդ տեղը գրավեց Էդուարդ Մնացականյանը:**

## Լիլիթ Գալոյանն անհաջող է մեկնարկել

**Լիլիթ Գալոյանն անհաջող է մեկնարկել Մոսկվայում անցկացվող մրցաշարում, որում 10 շախմատիստուհիներ շրջանաձեւ մրցակարգով վիճարկում են հաղթողի կոչումը: Մեկնարկային տուրում Լիլիթը ոչ-ոքի խաղաց Իոլանտա Զավադսկայի հետ, իսկ հաջորդ պարտիայում պարտվեց Բատսույագ Մոնգունտուլին: Վերջինս 2 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը: 1-ին տուրում նա հաղթել է Վալենտինա Գունինային:**

**Մեկնարկն անհաջող էր նաեւ Ռուսաստանը ներկայացնող Կարինա Համբարձումովայի համար, որը պարտություններ կրեց աշխարհի նախկին չեմպիոնուհի Ալեքսանդրա Կոստենյուկից ու Վալենտինա Գունինայից: 3-րդ տուրում Համբարձումովան սեւերով կխաղա Լիլիթ Գալոյանի հետ:**

*էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## ԷՐԳԵՆԵՔՈՆ

## «Հրանտ Դինքին չեմ սիրել»

Այս խոսքերը, ինչպես հունվարի 29-ի համարում գրել է «Հյուրիեթը», պատկանում է «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության առանցքային դեմքերից պաշտոնաթող գեներալ Վելի Քյուչուքին: Նա այդ մասին արտահայտվել է դատական նիստում՝ ի պատասխան Դինքի սպանությանը Էրգենեքոնի առնչության եւ իր մասնակցության վերաբերյալ մեղադրանքներին:

Ահա թե, ըստ թուրքական թերթի, ինչ է ասել պաշտոնաթող գեներալը. «Անձամբ չեմ ճանաչել Հրանտ Դինքին, նրա հետ ուղղակի կամ միջնորդի միջոցով որեւէ հանդիպում չեմ ունեցել: Ես նրան չեմ սիրել: Սիրելու պարտավորություն էլ չունեի: Սակայն սպանությանը հավանություն չեմ տալիս: Դինքի դեմ արդեն դատական գործ էր հարուցվել, դատավարությամբ նա կրելու էր իր պատիժը: Թեեւ ինձ մեղադրում են Տրապիզոն գնալու եւ այնտեղ ժանդարմերիայի կայազորի հրամանատար գնդապետ Ալի Օզին՝ Դինքին սպանելու հրաման տալու մեջ, սակայն ես Տրապիզոնում եղել եմ 2001-ի հունվարի 8-ին, երբ արդեն պաշտոնաթող էի»:

Ի դեպ, հանգուցյալ Դինքին հաճախակի են սպառնացել: Նա անտեսել էր դրանք, բացառությամբ պաշտոնաթող գեներալ Վելի Քյուչուքի սպառնալիքի: Եվ այդ մասին հայտնել էր Թաներ Աքչամին. «Առ այսօր սպառնալիքներին ուշադրություն չէի դարձնում, սակայն սպառնացողը եթե Վելի Քյուչուքն է, ապա կնշանակի դրանք չափազանց լուրջ են»:

Հ. Չ.

## «Ցեղասպանության հայկական պնդումներն ատելության դրսեւորում են»

Այդ մասին Ադանայում, ինչպես երեկ վկայել էր թուրքական ANKA գործակալությունը, հայտարարել է Ձախ ժողովրդավարական կուսակցության փոխնախագահ Ուլուչ Գյուրքանը: Նա մասնակցելով «Չուքուրովա» համալսարանում «Հայկական հարցն ու 1909-ի Ադանայի դեպքերը» թեմայով գիտաժողովին, ամբիոնից ասել է. «Ցեղասպանության հայկական պնդումները չեզոքացնելու համար նախ պետք է ցույց տալ, որ դրանք ուղղված լինելով թուրքական պետության եւ թուրք ազգի դեմ, դարձել են ատելության յուրահատուկ հանցագործություն: Այդ պնդումներով Թուրքիայի նկատմամբ համատարած ատելություն սերմանելու փորձ է արվում: Հետեւաբար շովինիստական այս մոտեցման դադարեցումն ու ցեղասպանության պնդումների համատեղ ուսումնասիրությունը պետք է առաջադրվի որպես նախապայման (նկատի ունի Հայաստանը)»:

Այնուհետեւ Գյուրքանը շարունակել է. «Հայոց ցեղասպանության պնդումները թափ ստացան 90-ական թթ.., երբ ԽՍՀՄ-ի փլուզումով դադարեց սառը պատերազմը: Դրանք համադրվեցին Հանթինգտոնի «Քաղաքակրթությունների բախում» թեզին համապատասխան ձեւավորված նոր աշխարհակարգի հետ եւ միջազգային բնույթ ստացան: Ավելին, դուրս գալով անցյալի հետ առերեսման շրջանակներից, սկսեցին այժմեական քաղաքականության մաս կազմել»:

Վերջում նա ուշադրություն է հրավիրել ցեղասպանության փաստերը հերքելու կարեւորության վրա, ավելացնելով. «Ցեղասպանության կոնվենցիային 1977-ին կցված հավելվածի 2-րդ արձանագրության համաձայն, «տեղահանությունը» կարելի է բնութագրել «զինվորական անհրաժեշտ միջոցառում», որովհետեւ 1-ին համաշխարհային պատերազմի տարիներին հայերը դիմել են զինված ապստամբության եւ անցել երկրի տարածք օկուպացնող ցարական Ռուսաստանի կողմը: Չմոռանալ, որ հրեաները Գերմանիայում ոչ ապստամբություն էին բարձրացրել, ոչ էլ համագործակցել թշնամու հետ»:

Հ. Չ.

## Garabagh.org կայքէջը վերսկսեց աշխատանքը

**«Արաքս» շաբաթաթերթ, 28.01.11:** Garabagh.org պարսկալեզու հայկական կայքէջը, որ հիմնականում տեղեկություններ է հրապարակում ղարաբաղյան ազատամարտի եւ մանավանդ Սումգայիթի եւ Բաքվի ցեղասպանությունների ու նաեւ Խոջալուի դեպքերի քողարկված ճշմարտությունների մասին, անցյալ օրը ադրբեջանցի հակերների կողմից կոտրվել էր, սակայն ինչպես արդեն տեղեկացրել էինք մեր նախորդ տեղեկատվությամբ, այսօրվանից վերսկսեց իր բնականոն աշխատանքը: Ի սրտե շնորհավորելով Garabagh.org-ի մեր գործընկերներին, բոլոր այն հայրենակիցներին, որոնք տիրապետում են պարսկերենին, խնդրում ենք իրենց լուրերով, տեղեկություններով եւ վերլուծական հոդվածներով թիկունք կանգնել Garabagh.org-ին:


ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Բանկի վարչական մասնաշենքի շինարարության մրցույթ՝ Դավթաշեն թաղամաս Տիգրան Պետրոսյան փողոց 31/1,31/4 հասցեով:

Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (010) 31-88-88 հեռախոսահամարով կամ այցելել Բանկի «Գնումների և մատակարարման» բաժին Բագրատունյաց փ. 16/2 հասցեով՝ ժամը 09:30-16:00-ն (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է մինչև ս.թ. փետրվարի 11-ը:


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն իր դրամագիտական հավաքածուն համալրելու նպատակով գնում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից հին ու նոր դրամանիշեր՝ մետաղադրամներ եւ թղթադրամներ, որոնք տարբեր ժամանակահատվածներում շրջանառության մեջ են եղել պատմական Հայաստանի տարածքում:

Դրամանիշերի գնման նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ստեղծված է Դրամանիշերի փորձաքննության եւ գնահատման հանձնաժողով, որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի շենքում յուրաքանչյուր երկուշաբթի ժամը 10-00 մինչեւ 13-00:

Տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ 59-29-03, 56-16-55:

ՀՀ կենտրոնական բանկ

## ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

### *ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Է. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ*



Լրացավ ականավոր դեղաբան, մանկավարժ եւ հասարակական մեծ գործիչ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ առողջապահության նախկին նախարար, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էմիլ Սամսոնի Գաբրիելյանի ծննդյան 80-ամյակը:

Մեծանուն գիտնական եւ հանրաճանաչ դեղաբան ակադեմիկոս Է. Ս. Գաբրիելյանի անունն իր պատվավոր տեղն ունի հայ բժշկագիտության պատմության մեջ:

Ակադեմիկոս Գաբրիելյանը հանրապետության մեծավաստակ գիտնականներից էր, ում գիտական հետազոտությունները իրենց արժանի ճանաչումը գտան նաեւ աշխարհի շատ երկրներում: Ընդգրկուն եւ բազմաշերտ է նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը:

Էմիլ Գաբրիելյանի հարուստ ու բազմաշերտ կյանքում եւ գործունեության մեջ ցայտուն կերպով առանձնանում են չորս հիմնական կոչում՝ գիտնական, ուսուցիչ, առողջապահության կազմակերպիչ ու հասարակական գործիչ:

Նրա ղեկավարած գիտական խմբի ստեղծած ուղղությունների համատեքստում ուսումնասիրվեցին անոթային շեղումների բուժման ժամանակ կիրառվող հայտնի դեղերի՝ մկանահակ կծկանքալուծների (պապավերին, նո-շպա), Ca-ի ներհակորդների եւ β- պաշարիչների ազդեցության նոր մեխանիզմներ: Հետաքրքրական են գիտնականի՝ անոթ-արյուն համակարգի խանգարումները արտակարգ իրավիճակներում, այն է՝ քրոնիկական բազմաբաղադրամաս հուզական ստրեսի պայմաններում, օրգանիզմի համակշռային եւ հարմարվողական հնարավորությունների ուսումնասիրությունները:

Գիտնականն առաջարկեց բազմաբաղադրամաս ստրեսի փորձարարական մոդել:

Է. Գաբրիելյանի հետազոտությունների շրջանակը ներառում էր նաեւ արյունաանոթային համակարգի փոփոխությունների ուսումնասիրությունը տարբեր ախտաբանական վիճակներում (պարբերական հիվանդություն, անոթային հիվանդություններ) եւ դրանց դեղային շտկման հնարավորությունները:

Ակադեմիկոս Գաբրիելյանի անմիջական ղեկավարությամբ իրականացվել են Հայաստանում ՁԻԱՀ-ի նոր բուժամիջոցի՝ արմենիկումի ստեղծման, համակողմանի ուսումնասիրության եւ գործնական բժշկության մեջ ներդրման հսկայածավալ աշխատանքներ: Այս դեղի բոլոր գիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփված են «Արմենիկում» մենագրության երկհատորյակում:

Պրոֆ. Գաբրիելյանն առավել քան 400 գիտական հրապարակումների, դեղաբանության 5 դասագրքի, դեղաբուժության 1 ձեռնարկի, 7 մենագրության, տասնյակից ավել գրքերի (էսսեներ, հուշագրություններ, հրապարակախոսական նյութեր, զրույցներ եւ այլն) հեղինակ է:

Նա բազմիցս մասնակցել է դեղաբանությանը նվիրված տարբեր միջազգային ֆորումներին: Միջազգային ճանաչում ստացած գիտական հետազոտությունների, գիտության մեջ ունեցած նվաճումների համար նրան շնորհվեցին բազմաթիվ կոչումներ, շքանշաններ ու մրցանակներ:

Է. Գաբրիելյանը միշտ աջակցել է Հայաստանում բժշկագիտության զարգացմանը՝ կազմակերպելով մի շարք գիտաժողովներ, մեծ սիրով ղեկավարել է իր աշխատակիցների գիտական աշխատանքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդ մասնագետների պատրաստմանը: Նրա անմիջական գիտական ղեկավարությամբ պատրաստվել են գիտության 18 թեկնածու եւ 10 դոկտոր:

Է. Գաբրիելյանը երկար տարիներ զբաղեցրել է ՀՀ ԳԱԱ Նախագահության փոխնախագահի եւ անդամի, Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնները:

Նա Հայաստանի Դեղաբանների գիտական ընկերության նախագահն էր, «Դեղեր եւ բժշկություն» բժշկագիտական տեղեկագրի գլխավոր խմբագիրը, մի շարք գիտական ամսագրերի խմբագրակազմի անդամը:

Հետաքրքիր է նրա աշխատանքային գործունեության սկիզբը: Է. Գաբրիելյանը, որպես վիրաբույժ ու գլխավոր բժիշկ, աշխատել է Հայաստանի շրջանային բուժհիմնարկներից մեկում:

1959թ-ից նրա հետագա գործունեությունը կապվել է Երեւանի բժշկական ինստիտուտի հետ, ուր նա սկզբում ասիստենտ էր, այնուհետեւ՝ դոցենտ, պրոֆեսոր եւ վերջում՝ դեղաբանության ամբիոնի ղեկավար: Այստեղ է պաշտպանել իր թեկնածուական (1963) եւ դոկտորական (1971) ատենախոսությունները: 1969-1971թթ. ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորն էր, 1971-1975թթ.՝ ինստիտուտի ռեկտորը:

Այդ տարիներին ինստիտուտում սկսեցին ներդրվել համակարգչային ուսուցման առաջավոր մեթոդներ՝ ապահովելով ուսանողների գիտելիքների օբյեկտիվ վերահսկումը, ստեղծվեց թեստային խնդիրների բազա, դրվեցին ինստիտուտի համակարգչային հիմքերը:

Է. Գաբրիելյանը Խորհրդային Միության եւ հետխորհրդային շրջանի առողջապահության կազմակերպման մեծ գիտակ էր, հմուտ կազմակերպիչ: Անուրանալի է Գաբրիելյանի ավանդը հանրապետության առողջապահության բնագավառում: Շուրջ 15 տարի (1975-1989թթ.) լինելով ՀՀ առողջապահության նախարար՝ ճանաչված գիտնականը ծառայել է հայ ժողովրդի առողջության պահպանման եւ կազմակերպման դժվարին գործընթացին՝ այն արգասավոր կերպով համատեղելով գիտամանկավարժական գործունեությամբ: Նրա պաշտոնավարման տարիներին բացվել են բազմաթիվ հիվանդանոցային համալիրներ, կենտրոններ, կլինիկական ինստիտուտներ եւ արդի պայմաններին համահունչ հագեցած եւ հեռահաղորդակցական հնարավորություններով լաբորատորիաներ, ախտորոշիչ կենտրոններ՝ հնարավորություն ստեղծելով հեռուստակամուրջների եւ խորհրդակցությունների միջոցով անմիջական կապ ստեղծել այլ երկրների մասնագետների հետ: Նախարար եղած ողջ ժամանակաշրջանում Հայաստանում կառուցվեցին եւ շահագործման հանձնվեցին առավել քան 30 նոր բուժհիմնարկներ:

Ակադեմիկոսի գիտելիքներն ու կազմակերպչական տաղանդը լավագույն ձեւով դրսեւորվեցին 1988 թվականի ահեղ երկրաշարժի օրերին: Ուժերի գերագույն լարումով նա համակարգեց տուժածներին բժշկական եւ բարոյական օգնության ցուցաբերման խնդիրները: Նրա ջանքերի շնորհիվ բացվեցին սահմանները, եւ հնարավոր դարձավ երկրաշարժից տուժած ծանր հիվանդների բուժումը արտերկրի լավագույն հիվանդանոցներում:

1992թ. հուլիսի 22-ին երկրի համար ծանր սոցիալ-տնտեսական ժամանակաշրջանում, անցման փուլում, բարդ քաղաքական պայքարի թոհուբոհի մեջ ակադեմիկոս Գաբրիելյանը կարողացավ ստեղծել մեր հանրապետության համար նոր ու խիստ կարեւոր կազմակերպություն՝ Դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձաքննության գիտական կենտրոն, որի անփոխարինելի ղեկավարն էր մինչեւ իր կյանքի վերջին օրերը:

Է. Գաբրիելյանը ակտիվորեն աջակցել է Հայաստանում գիտական հիմքի վրա ավանդական (այլընտրանքային) բժշկության վերածննդին: Նրա նախաձեռնությամբ եւ ԱՀԿ-ի անմիջական մասնակցությամբ կազմակերպվեցին դեղաքաղաքականությանն ու ավանդական բժշկությանը նվիրված մի շարք միջազգային ֆորումներ:

Թե գիտության, թե դեղաքաղաքականության մեջ ակադեմիկոսի գործունեության բոլոր ուղղությունները շոշափելի ազդեցություն ունեցան հիմնարար գիտության զարգացման վրա՝ նոր կառուցողական դրույթների եւ գործնական բժշկության մեջ ծանրակշիռ ավանդի ձեւով:

Լինելով իսկական հայրենասեր՝ Է. Գաբրիելյանը միշտ ակտիվորեն մասնակցում էր երկրի հասարակական կյանքին:

Վերջին տարիներին Գաբրիելյանը ՀՀ նախագահին կից Հանրային խորհրդի անդամ էր, ՀՀ փորձագիտության Ազգային բյուրոյի նախագահը: Ամենուր նա ձգտում էր ներդնել նորը, առաջավորն ու բարին:

Հայրենական եւ արտերկրի բժշկական հանրության մեջ նրա անհերքելի հեղինակությունն ու հանրաճանաչությունը պայմանավորված էին իսկական գիտնականի կարդացածությամբ, մանկավարժի տաղանդով, ակտիվ հասարակական գործունեությամբ, անկաշառ քաղաքական կեցվածքով, լայն, առաջադեմ հայացքներով:

Ուներ մեծ գեղագիտական ճաշակ ու ստեղծագործելու հմտություն, վկան՝ բազմաթիվ արձակ ու չափածո ստեղծագործությունները, էսսեներն ու հուշագրությունները, հրապարակախոսական հոդվածները:

Նրա բազմաթիվ աշակերտներն ու հետնորդները, հանրապետության բժշկական հասարակայնությունը, բոլոր նրանք, ովքեր ճանաչում էին անվանի գիտնականին, իրենց երախտագիտության եւ հարգանքի տուրքն են մատուցում գիտության անդուլ մշակին, անխոնջ գիտնականին, ազնիվ մարդուն ու մեծ քաղաքացուն, որն իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերեց մայր ժողովրդին ու հայրենիքին ծառայելու սրբազան ու պատվավոր գործին:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ,
ՀՀ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան հայտարարում է ընտրություն «ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտ» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առեւտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 16-րդ կետի, կազմակերպության տնօրենի թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն համապատասխան բաժանմունքի բյուրոն, կազմակերպության գիտական խորհուրդը, գիտական կոլեկտիվը եւ կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները: Առաջադրված թեկնածուները ներկայացնում են հետեւյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Լուսանկար
3. Աշխատանքային գրքույկի պատճե
4. Ինքնակենսագրություն
5. Բարձրագույն կրթության, գիտական աստիճանի եւ գիտական կոչման դիպլոմների պատճենները
6. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
7. Գիտական աշխատությունների ցուցակ
8. Բնութագիր աշխատավայրից

Առաջադրված թեկնածուի համար կազմակերպության մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտական աստիճանի առկայությունը պարտադիր է: Թեկնածուները պետք է լինեն 65 տարեկանից ցածր:

Թեկնածուների հիմնավորված առաջադրումները վերոնշյալ փաստաթղթերի հետ, մեկ ամսվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից), խնդրվում է ներկայացնել ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի եւ տեխնիկական գիտությունների բաժանմունք, հետեւյալ հասցեով՝ 0019, Երեւան, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռ.՝ 52-96-30:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 31.1.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: